ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ ԱՇՈՏԻ

Է-ԺԲ ԴԱՐԵՐԻ ՀԱՅՈՑ ՏՈՄԱՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՊԱՏՄԱ-ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)

Թ.00.05 – «Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2024

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Շիրինյան Էռնա Մանեա Սերգեյի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր
Քյոսեյան Հակոբ Հովհաննեսի

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Սիմոնյան Գայանե Սիմոնի

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2024 թ. հունիսի 18-ին՝ ժամը 12:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող՝ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ Կրոնագիտության 068 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0025, ք. Երևան, Աբովյան փողոց 52, ԵՊՀ 6-րդ մասնաշենք):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թ. մայիսի 13-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Արշակ Յուրիի Բալյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հայ տոմարագիտական միտքը տարբեր դարաշրջաններում առաջնակարգ դիրք է գրավել գիտության բազմոլորտ բնագավառներում: Լինելով համալիր գիտություն՝ տոմարագիտությունը սերտ կապերով աղերսվում է և՛ հումանիտար, և՛ բնագիտական գիտաճյուղերին՝ աստվածաբանությանը, աստվածաշնչագիտությանը, բնագրագիտությանը, պատմությանը, գրականությանը, տոնագիտությանը (տոնացույցին), թվաբանությանը, աստղագիտությանը, տիեզերագիտությանը, մշակույթի այլևայլ ոլորտներին: Այն առնչվել է նաև բնատնտեսական տարվա հետ, քանի որ տոները մեծապես կապված են եղել տնտեսական գործունեության հիմնական փուլերի հետ: Հատկապես կարևոր է, որ տոմարագիտությունը մեծ դեր է ունեցել ուսումնառության ոլորտում՝ մշտապես ընդգրկված լինելով վարդապետարաններում և համալսարաններում: Նրա մեծ արժեքը գնահատելի է ինչպես ժողովրդի ինքնության պահպանության, այնպես էլ հայ եկեղեցու դավանաբանական ուղղվածության ընդգծման և աստվածաբանական խնդիրների կարգավորման գործում:

«Է-ԺԲ դարերի հայոց տոմարի մեկնությունները (պատմա-աղբյուրագիտական ուսումնասիրություն)» թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ցայսօր հայոց տոմարի պատմությանն ու մեկնություններին վերաբերող որոշ աղբյուրագիտական և ձեռագրական միավորներ չեն ենթարկվել համակողմանի քննության և պարզաբանման, դրանց վերաբերյալ համեմատական-վերլուծական համապարփակ աշխատանքներ չեն իրականացվել ինչպես հայ, այնպես էլ օտարազգի տոմարագետների կողմից: Կարևոր է նաև, որ մեր օրերում դրանց ուսումնասիրության նվազման միտում է նկատվում, ինչը մեծ կորուստ կարող է լինել հայագիտության համար, քանի որ տոմարագիտությունը մեր կրթության մեջ ներշրջանական գիտությունների կարևոր մաս է կազմել: Հայոց տոմարի մեկնությունների համակողմանի և ամբողջական հետազոտությունը շատ լայնածավալ աշխատանք է, որը մեկ մասնագետի անելիք չէ, սակայն հուսով ենք, որ մեր այս համեստ փորձով կաշխատենք լրացնել որոշ բացեր: Թեմային առնչվող ձեռագրական միավորները հիմնականում տպագրված են, սակայն դրանց վերաբերյալ համընդհանուր ուսումնասիրություններ չեն կատարվել: Տոմարական գիտելիքները և մեթոդները լուծել և մինչև օրս էլ լուծում են հայագիտության մեջ գոյություն ունեցող տարբեր բազմաշերտ հանգույցներ: Հայոց տոմարի մեկնողական բնագրերն օգնում են՝ պարզելու մի շարք հարցեր, որոնք վերաբերում են հայոց թվականության համակարգերին: Տոմարական մեկնողական միավորներում առկա տոների, աստղագիտական երևույթների ամիս-ամսաթվային համապատասխանությամբ այսօր ճշգրտվում են ոչ միայն կարևոր տեղեկություններ՝ կապված պատմական իրադարձությունների հետ, այլև դրանք օժանդակում են տոների, աստղագիտական երևույթների ստույգ ժամանակները երևան հանելուն, որոնց լուսաբանումը օգտակար է թե՛ տոմարագիտությամբ, թե՛ հայագիտության տարբեր խնդիրներով զբաղվող ուսումնասիրողների համար:

Ատենախոսության թեմայի արդիականությունը և հրատապությունը դիտարկվում են նաև այն տեսանկյունից, որ սույն աշխատանքում փորձ է կատարվում ընդհանուր պատմահամեմատական սկզբունքով ներկայացնել Է-ԺԲ դարերում ստեղծված հայոց տոմարի մեկնությունների կանոնական սահմանումների մեծ մասի

առանձնահատկությունները և ընդհանրությունները: Վերոնշյալ պատճառներից պարզ է դառնում, թե որքան արդիական է ուսումնասիրել հայոց տոմարի մեկնություններին վերաբերող հայկական սկզբնաղբյուրները, ձեռագրական նյութերը, դրանք դնել գիտական շրջանառության մեջ և հասանելի դարձնել ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան հետազոտողների համար:

Ուսումնասիրության առարկան, նպատակն ու խնդիրները: Ուսումնասիրության առարկան Անանիա Շիրակացու, Հովհաննես Կոզեռնի, Հովհաննես Սարկավագի և Սամուել Անեցու «Մեկնութիւն տոմարի» երկերը և դրանցում առկա կանոններն ու սահմանումներն են: Մենք մեր առջև նպատակ ենք դրել՝ համեմատական-վերլուծական քննության ենթարկելու Է-ԺԲ դարերում գրված տոմարի մեկնությունները: Այդ նպատակն իրականացնելու ճանապարհին առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

- պարզել հայոց տոմարի մեկնությունների ժանրային և բովանդակային առանձնահատկությունները,
- պարզաբանել հայոց տոմարի մեկնություններ գրելու պատճառները,
- ներկայացնել, թե այդ մեկնությունները մատենագրական ժառանգության մեջ (ձեռագիր և տպագիր) ինչ բնույթի աշխատություններում են ընդգրկվել,
- համառոտ անդրադարձ կատարել Անանիա Շիրակացու տոմարական ժառանգությանը,
- Անանիա Շիրակացուն ներկայացնել՝ որպես «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» բնագրի հեղինակի,
- տրամադրել այդ բնագրի պարունակած կանոնների վերլուծումը և համեմատումն ինչպես Անանիա Շիրակացու ընդարձակ մեկնության, այնպես էլ մյուս անվանի տոմարագետների կարգած կանոնների հետ,
- մեկտեղված ներկայացնել Հովհաննես Կոզեռնի կյանքին վերաբերող տեղեկությունները, ինչպես նաև նրա անունով մեզ հասած և Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ձեռագրական ժառանգությունը,
- արժևորել Հովհաննես Կոզեռնի գրական ու ստեղծագործական վաստակը, քննության ենթարկել վերջինիս հեղինակած «Մեկնութիւն տոմարի» երկի սահմանումները,
- քննել Կոզեռնի՝ ՄՄ 5809 և ՄՄ 8716 ձեռագրերում տեղ գտած տոմարի մեկնության «Ձի՞նչ է թուական»-ին առնչվող մեկնողական հատվածը և այն համեմատել քննական բնագրերի նույնաբնույթ սահմանման հետ (ձեռագրային այս միավորները չեն օգտագործվել հրատարակության համար),
- քննարկել Շ-եակ առաջին շրջապտույտի ժամանակ տեղի ունեցած Ծռազատիկները՝ զուգահեռաբար ներկայացնելով վերջինիս առնչվող պատմական իրողությունները՝ կատարված տվյալ ժամանակաշրջանում,
- կազմել և ներկայացնել 1004/1007 թթ.-ի «Պատճէն»-ը,
- ներկայացնել Հովհաննես Սարկավագ Իմաստասերի «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» ժողովածուի մեկնողական այն գլուխները, որոնց պարունակած տոմարական հարցադրումները, կանոններն ու սահմանումները համեմատության եզրեր ունեն Անանիա Շիրակացու և Հովհաննես Կոզեռն Տարոնեցու հեղինակած մեկնությունների հետ,

- պատճառաբանել Հովհաննես Սարկավագի՝ Լուսնի 19-ամյա պարբերաշրջանի զատկական լման առաջին տարին ապրիլի 4-ին սահմանելու փաստը՝ «Յաղագս լուսնի» վերաբերյալ կանոնների համեմատական քննությամբ,
- բացատրել Հովհաննես Սարկավագի կատարած կանոնական փոփոխությունները և դրանց պատճառները վերադրի, հարակայի համակարգերի վերաբերյալ,
- ներկայացնել տարվա ընթացքում տեղի ունեցող տոների, արևային տարվա եղանակների ու աստղագիտական երևույթների ամսաթվային համարժեքները՝ ըստ հուլյան և Ստեփանոս Մեծրկա որդու կազմած անշարժ տոմարի նախագծի,
- վերականգնել Ստեփանոս Մեծրկա որդու կազմած Ձատկացուցակի երկու 19-ամյակների աղյուսակային պատկերը,
- քննարկել Սամուել Անեցու «Մեկնութիւն տոմարի, զոր արարեալ է Սամուէլի քահանայի ի խնդրոյ Ստեփանոսի Իմաստասիրի» երկի տոմարական որոշ խնդիրներ՝ ցույց տալով մեկնողական բնագրի նմանություններն ու առանձնահատկությունները՝ ի համեմատ ներկայացված մյուս մեկնությունների:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Աշխատանքի ժամանակագրական սահմանները հիմնականում ներառում են Է-ից՝ Անանիա Շիրակացու ապրած ժամանակաշրջանից մինչև ԺԲ դարերը՝ Հովհաննես Սարկավագի, Ստեփանոս Մեծրկա որդու և Սամուել Անեցու գործունեության շրջանը: Ատենախոսության մեջ որոշ տեղերում շեղվել ենք ժամանակագրական սահմաններից, երբ կարիք է զգացվել որևէ սահմանում համեմատել Հակոբ Ղրիմեցու (ԺԴ-ԺԵ դարեր) կարգած նույնաբնույթ կանոնների հետ: Ժամանակագրական սահմանների նման ընտրությունը պայմանավորված է Է-ԺԲ դարերի հայոց տոմարի մեկնությունների համեմատական քննությունն առավել ամբողջական դարձնելու, մեկնողական սահմանումներում կատարված փոփոխությունների, խմբագրությունների կամ նույնական լինելու հարցի պարզաբանման հետ՝ փաստերը ճիշտ և լիարժեք ընկալելու անհրաժեշտությամբ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսությունը շարադրելիս օգտվել ենք հիմնականում տոմարական-տոնացուցային մեթոդից, որի կիրառումը ենթադրում է առհասարակ ուսումնասիրություններն օժտել տոմարական ճշգրիտ հաշվարկներով: Դրանց շնորհիվ լուսաբանվում են դեռևս չուսումնասիրված երևույթներ, և դրանք զերծ են պահվում սխալ և թերի հաշվումներից և թյուրըմբռնումներից: Առաջնորդվել ենք նաև նկարագրական, համեմատական, համադրական-վերլուծական, պատմահամեմատական մեթոդներով՝ առկա ձեռագրական նյութի, հրատարակված սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների համադրման ու վերլուծման եղանակով:

Ատենախոսության գիտական նորույթը: Թեմայի ուսումնասիրությունն ունի ինչպես տոմարագիտական, այնպես էլ պատմաբանասիրական և աղբյուրագիտական նշանակություն: Ատենախոսության էջերում ուսումնասիրված են Է-ԺԲ դարերում ստեղծված հայոց տոմարի մեկնությունները: Կատարված պատմահամեմատական քննությունը, որն աչքի է ընկնում իր ժամանակագրական ընդգրկումով և համալիր բնույթով, թերևս կարելի է որպես նորություն գնահատել հայագիտության մեջ: Իհարկե, թեման տարբեր ժամանակներում ուսումնասիրվել է ոլորտիս հետազոտողների կողմից, սակայն սույն ատենախոսությունն առաջին փորձն է Է-ԺԲ դարերի հոլովույթում

մեկնությունների և նրանց պարունակած կանոնական սահմանումների միաժամանակյա նկարագրության, համեմատության և վերլուծության տեսանկյունից: Այսպես, վերհանվում են թեմային առնչվող հետևյալ գիտական նորույթները.

- ատենախոսության մեջ մեկնաբանված են հայոց տոմարի մեկնությունների ժանրային և բովանդակային առանձնահատկությունները, վերջիններիս ստեղծման պատճառները, նաև այն, թե այդ մեկնությունները մատենագրական ժառանգության մեջ (ձեռագիր և տպագիր) ինչ բնույթի աշխատություններում են ընդգրկվել,
- «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» բնագրի կանոններից շատերը վերլուծված և համեմատված են ինչպես Անանիա Շիրակացու ընդարձակ մեկնության, այնպես էլ մյուս անվանի տոմարագետների կարգած կանոնների հետ՝ արձանագրելով կանոնական սահմանումների փոփոխության կամ նույնական մնալու պատճառները,
- սույն ատենախոսության մեջ առաջին անգամ հրատարակվում են ՄՄ 1879՝ «Գիրք պատճառաց» պայմանական խորագիրը կրող ձեռագրի նախակրթությունների՝ տոմարի մեկնություններին վերաբերող շուրջ 15 մեջբերումներ, որոնք ներկայացրել ենք հակիրճ մեկնաբանություններով,
- «Մեկնութիւն տոմարի» բնագրերում առկա «տոմար» եզրույթի իմաստային քննարկմամբ ու վերլուծությամբ բացահայտվում են երևույթի տարբեր նրբիմաստներ, որոնք մանրամասնորեն մեկնաբանվում են աշխատանքում և ևս մեկ անգամ հուշում են, թե ինչ լայն ընդգրկվածություն ունի տոմարն առհասարակ,
- Քրիստոսի խաչելության ժամանակ տեղի ունեցած Արեգակի և Լուսնի խավարումը ներկայացրել ենք որպես հինկտակարանյան մարգարեության կատարում, հրաշք՝ առ այսօր մարդու համար անբացատրելի երևույթ,
- մեկտեղված և ներկայացված է Հովհաննես Կոզեռնի անունով մեզ հասած և Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակներում առկա ողջ ձեռագրական ժառանգությունը,
- գիտական շրջանառության մեջ ներգրավված երկու նոր ձեռագրերի (ՄՄ 5809 և ՄՄ 8716) հիման վրա քննված է Հովհաննես Կոզեռնի՝ դրանցում գտնվող «Մեկնութիւն տոմարի» բնագրի «Զի՞նչ է թուական»-ին առնչվող մեկնողական հատվածը և համեմատված է հրատարակված բնագրերում առկա սահմանման հետ: Այս ձեռագրերի նշյալ տոմարական միավորի հիման վրա կատարվել են որոշակի ճշգրտումներ,
- ներկայացված են Հովհաննես Սարկավագ Իմաստասերի «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» ժողովածուի մեկնողական այն գլուխները, որոնցում ներառված հարցերը, կանոններն ու սահմանումները համեմատության եզրեր ունեն Անանիա Շիրակացու և Հովհաննես Կոզեռն Տարոնեցու հեղինակած մեկնությունների հետ: Մեկնաբանված են Հովհաննես Սարկավագի կատարած կանոնական փոփոխությունները և դրանց պատճառները,
- աշխատանքում պարզաբանված են տարվա ընթացքում տեղի ունեցող տոների, արևային տարվա եղանակների ու աստղագիտական երևույթների ամսաթվային համարժեքները՝ ըստ հույյան և Ստեփանոս Մեծրկա որդու կազմած անշարժ տոմարի նախագծի,

- վերականգնված է նաև Ստեփանոս Մեծրկա որդու կազմած Զատկացուցակի երկու 19-ամյակների աղյուսակային պատկերը՝ ըստ հուլյան և հայոց (Ստեփանոս Մեծրկա որդու) անշարժ տոմարների,
- կատարված է Է-ԺԲ դդ. հայոց տոմարի մեկնությունների կանոնական սահմանումների համեմատական քննություն:

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը (Սկզբնաղբյուրների և գրականության տեսություն): Ատենախոսության շարադրման ընթացում մեր կողմից օգտագործված պատմա-աղբյուրագիտական նյութը բաժանվում է հետևյալ խմբերի՝ ձեռագրեր, պատմագրական երկեր, ուսումնասիրություններ՝ գրքեր և հոդվածներ: Մեր թեմային առնչվող ձեռագրական նյութը հիմնականում տպագրված է. այդ պատճառով նպատակահարմար չենք գտել՝ ուսումնասիրելու այն բոլոր ձեռագրային միավորները, որոնք օգտագործվել են խնդրո առարկա բնագրային նյութի հրատարակության, ինչպես նաև քննական բնագրերի կազմման համար: Այնուհանդերձ, կան «Մեկնութիւն տոմարի» բնագիրը պարունակող ձեռագրեր, որոնք չեն օգտագործվել հետազոտողների կողմից: Այդպիսիք են, օրինակ, ՄՄ 5809[1] և ՄՄ 8716[2] ձեռագրերը, որոնք պարունակում են Հովհաննես Կոզեռնի «Մեկնութիւն տոմարի» բնագիրը, բայց չեն կիրառվել քննական բնագրերը հրատարակելիս հավանաբար այն պատճառով, որ ուշ շրջանի ընդօրինակություններ են: Այդ ձեռագրերում առկա տոմարական միավորն օգտակար եղավ «Զի՞նչ է թուական»-ին առնչվող հատվածում որոշակի ճշտումներ կատարելու գործում՝ տեղեկություններ քաղելով նաև հրատարակված բնագրերից և պատմագրական այլ աղբյուրներից: Կարող ենք առանձնացնել ՄՄ 1999 ժողովածուի Ա ձեռագիրը, որը պարունակում է նաև Հովհաննես Կոզեռնի մեկնությունը[3]: Թեև հետազոտողները ներառել են նշված ձեռագիրը մեկնության քննական բնագրերը կազմելիս, այդուհանդերձ ուսումնասիրեցինք այն՝ մեկնության հետ կապված որոշ նրբություններ ճիշտ ընկալելու համար: Մեծ կարևորություն է ներկայացնում ՄՄ 1879 գրչագիրը[4]՝ «Գիրք պատճառաց» պայմանական խորագիրը կրող շատ ուշագրավ և դեռևս անտիպ ժողովածուն: Սույն մեծածավալ ձեռագրի նախակրթություններում պահպանված մի շարք միավորներ աղերսվում են հայոց տոմարի մեկնությունների տարբեր խնդիրներին:

Ձեռագրային տեղեկություններ քաղելուն մեծապես նպաստել են «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի» և «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի» կոթողային աշխատությունները[5]:

---

[1] ՄՄ, ձեռ. 5809, թ. 77բ-80ա:

[2] ՄՄ, ձեռ. 8716, թ. 21ա-24բ:

[3] ՄՄ, ձեռ. 1999, թ. 67բ-76բ:

[4] ՄՄ, ձեռ. 1879: Այս անտիպ երկի քննական բնագիրը հրատարակման է պատրաստում ատենախոսությանս ղեկավար պ. գ. դ., պրոֆ. Է. Մ. Շիրինյանը: Մեր շնորհակալությունն ենք հայտնում նրան՝ ձեռագրի նախակրթություններում մեջբերված մի խումբ կանոնական հատվածները մեզ տրամադրելու և դրանք առաջին անգամ հրատարակելու գործը մեզ շնորհելու համար:

[5] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, ներած.՝ Օ. Եգանյանի, խմբ.՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երեւան, 1965: Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, ներած.՝ Օ. Եգանյանի, ցանկերը և համեմատ.

Ատենախոսության համար արժեքավոր սկզբնաղբյուր են հանդիսացել Արիստակես Լաստիվերցու (ԺԱ դար) «Պատմութիւն»[6], Մատթեոս Ուռհայեցու (ԺԱ–ԺԲ դարեր)[7] և Սամուել Անեցու (ԺԲ դար) «Ժամանակագրութիւն»[8], Սմբատ Սպարապետի (ԺԳ դար) «Տարեգիրք»[9] պատմական երկերը, որոնք օգնել են՝ վեր հանելու Հովհաննես Կոզեռնի կյանքին ու գործին վերաբերող իրողությունները: Այս շարքում առանձնահատուկ է Մատթեոս Ուռհայեցու աշխատությունը, քանզի այն քննարկվելիք հարցի շուրջ անհամեմատ ավելի շատ տեղեկություններ է հաղորդում: Ժ-ԺԱ դդ. պատմիչ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը[10] կարևոր մեջբերում է կատարում Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Բ Բագրևանդցու գահակալության Դ (4-րդ) տարում գումարված Դվինի Բ ժողովի վերաբերյալ, ինչին անդրադարձել ենք «Ձի՞նչ է թուական» մեկնողական հատվածի քննության ժամանակ: Հովհաննես Սարկավագի կարգած տոմարական բարեփոխության մասին հետաքրքրական տեղեկություն է հաղորդում ԺԳ դարի պատմիչ Մխիթար Այրիվանեցին[11]: Իսկ Սամուել Անեցու՝ Անիի Կաթողիկե եկեղեցու քահանա լինելու իրողությունը փաստում է ԺԳ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին[12]: Ղևոնդ Ալիշանի աշխատությունները նշանակալի տեղեկություններ են

տախտակները՝ Օ. Եգանյանի, խմբ.՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երեւան, 1970: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, խմբ.՝ Ա. Մնացականյանի, Օ. Եգանյանի, Երևան, 1984: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաբեան, Ա. Քեօշկարեան, խմբ.՝ Ա. Մնացականեանի, Օ. Եգանեանի, Ա. Զէյթունեանի, ցանկերը՝ Վ. Դեւրիկեանի, Երևան, 2004: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, կազմեց՝ Օ. Եգանեան, խմբ.՝ Փ. Անթաբեանի, Յ. Քէօսէեանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահէ քիյ. Հայրապետեանի, ցանկերը կազմեց Վ. Դեւրիկեանը, Երեւան, 2007: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Դ, կազմեցին՝ Ա. Քէօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեօսէեան, խմբ.՝ Փ. Անթաբեանի, Յ. Քեօսէեանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահէ քիյ. Հայրապետեանի, ցանկերը կազմեց Վ. Դեւրիկեանը, Երեւան, 2008: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե, կազմեց՝ Օ. Եգանեան, խմբ.՝ Յ. Քեօսէեանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահէ քիյ. Հայրապետեանի, ցանկերը կազմեց Վ. Դեւրիկեանը, Երեւան, 2009: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Զ, խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, 2012: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Է, խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, 2012: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ը, խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի, ցանկերը կազմեց՝ Վ. Դեւրիկեան, Երեւան, 2013: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Թ, խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, 2019: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ժ, խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, 2019:

[6] *Պատմութիւն Արիստակեսայ վարդապետի Լաստիվերցւոյ,* Թիֆլիս, 1912:

[7] **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898:

[8] **Սամուել Անեցի և շարունակողներ,** Ժամանակագրություն, աշխ.՝ Կ. Մաթևոսյանի, Երևան, 2014:

[9] *Սմբատայ Սպարապետի Տարեգիրք,* «Մատենագրութիւնք նախնեաց», Վենետիկ, Ս. Ղազար, 1956:

[10] *Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան,* Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:

[11] *Մխիթար Այրիւանեցւոյ Պատմութիւն Հայոց՝ ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին,* Մոսկվա, 1860:

[12] **Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն Հայոց, աշխ.՝ Կ. Մելիք-Օհանջանեանի, Երևան, 1961:

հաղորդում Հովհաննես Կոզեռնի և Սամուել Անեցու կյանքի և գործունեության, հատկապես վերջինիս հեղինակած «Մեկնութիւն տոմարի» բնագրի վերաբերյալ[13]:

Սույն ատենախոսության հիմքում ընկած են Ա. Աբրահամյանի հրատարակած աշխատությունները. դրանցից առաջինը նվիրված է Անանիա Շիրակացու ընդարձակ մեկնողական բնագրին՝ «Տիեզերագիտութիւն եւ տոմար» վերնագրով[14]: Վերջինիս՝ տոմարին և տիեզերագիտությանը վերաբերող և քննարկվելիք մյուս բնագրերի հետ ընդհանրություն ունեցող կանոնական սահմանումները մեր աշխատանքի Ա գլխի հիմքն են: Հույժ կարևորություն ունեն նաև նույն հեղինակի «Անանիա Շիրակացու մատենագրությունը»[15], «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը»[16] աշխատությունները, որոնք նշանակալի էին ոչ միայն խնդրո առարկա մեկնությունների, այլև Անանիա Շիրակացու և Հովհաննես Սարկավագի կյանքին ու գործունեությանն առնչվող զանազան հարցերի քննարկման տեսանկյունից: Թեմայի վերաբերյալ օգտաշատ վկայություններ են հաղորդում նույն հեղինակի մյուս ուսումնասիրությունները[17]: Օրինակ՝ «Սամվել Անեցու տոմարական և տիեզերագիտական աշխատությունը» հոդվածում նա հրատարակել է Սամուել Անեցու «Մեկնութիւն տոմարի» բնագիրը՝ զուգորդելով այն հետաքրքրական ներածությամբ[18]:

Կարևոր սկզբնաղբյուր է տոմարագետ Ջ. Էյնաթյանի աշխատասիրությամբ հրատարակված Հակոբ Ղրիմեցու տոմարական ժառանգությունը՝ «Հակոբ Ղրիմեցի, Տոմարագիտական աշխատություններ» վերնագրով[19], որից օգտվել ենք, երբ տոմարի մեկնողական որոշ սահմանումներ համեմատել ենք Ղրիմեցու կարգած նույնաբնույթ կանոնների հետ: Մշտապես մեր սեղանին է եղել նաև 2015 թ. Ջ. Էյնաթյանի կողմից հրատարակված «Տիեզերագիտության և տոմարի մեկնություններ (Է.-ԺԵ. դարեր), Ուսումնասիրություն և բնագրեր[20]» աշխատությունը, որն օժտված է ընդարձակ և արժեքավոր նախաբանով: Նշանակալի է, որ նախաբանին հաջորդում են 4 քննական և 1 համեմատական բնագրերը, որոնցից երեքը՝ «Մեկնութիւն տումարի Անդրիասա», «Մեկնութիւն տոմարի, զոր արարեալ է Յոհաննիսի վարդապետի, զոր մականուն Կոզեռն կոչեցեալ» և «Յոհաննիսի վարդապետի, որ մականուն Կոզեռն ի խնդրոյ Անանիայի աշակերտեաց եպիսկոպոսի վասն զի գիտելոյ զպատճառ վերայ բերելեաց», մեզ համար սկզբնաղբյուր են համարվել թեկնածուական ատենախոսությունը շարադրելիս: Էական նշանակություն ունեն նաև հեղինակի ««Պատճէն տոմարի հայոց

---

[13] **Ղեւոնդ Ալիշան,** Հայապատում (Պատմիչք եւ պատմութիւնք հայոց), Վենետիկ, 1901: **Ղ. Ալիշան,** Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873:

[14] **Անանիա Շիրակացի,** Տիեզերագիտութիւն եւ տոմար, աշխ.՝ **Ա. Աբրահամյանի,** Յերեւան, 1940:

[15] **Ա. Աբրահամյան,** Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944:

[16] **Ա. Աբրահամյան,** Հովհաննես Իմաստասերի մատենագրութիւնը, Երևան, 1959:

[17] **Ա. Աբրահամյան,** Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1959: **Ա. Աբրահամյան,** Անանիա Շիրակացու լուսնի պարբերաշրջանները, Երևան, 1962: **Ա. Աբրահամյան,** Անդրեասի տոմարագիտական աշխատությունները, Բնագիտության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում, «Գիտական հետազոտությունների ժողովածու», հ. Զ, Երևան, 1967, էջ 58-82:

[18] **Ա. Աբրահամյան,** Սամվել Անեցու տոմարական և տիեզերագիտական աշխատությունը, «Էջմիածին», 1952, Ա, էջ 30-36, 1952, Բ, էջ 34-43:

[19] **Հակոբ Ղրիմեցի,** Տոմարագիտական աշխատություններ, աշխ.՝ **Ջ. Էյնաթյանի,** Երևան, 1987:

[20] **Ջ. Էյնաթյան,** Տիեզերագիտության և տոմարի մեկնություններ (Է.-ԺԵ. դարեր), Ուսումնասիրություն և բնագրեր, Երևան, 2015:

մեծացը» և նրա մի քանի մեկնությունները», «Հովհաննես Կոզեռն տոմարագետը (ԺԱ դար)» հոդվածները[21]: Տոմարագիտության վերաբերյալ աշխատությունների այսօր արձանագրված սակավության պարագայում նշված գործերի արժեքն էլ ավելի է մեծանում, և դրանք լավագույնս խթան են հանդիսանում տոմարի հարցերով զբաղվող ուսումնասիրողների համար: Հարկ է նշել նաև Ջ. Էյնաթյանի աշխատասիրությամբ և Գ. Տեր-Վարդանյանի աշխատասիրությամբ ու խմբագրությամբ կազմված ««Պատճէն տոմարի» (Է-ԺԵ. դդ.)» աշխատությունը[22], որը ևս մեծարժեք սկզբնաղբյուր է հայ տոմարագիտական գրականության մեջ: «Մատենագիրք հայոց» ժողովածուներում ներկայացված և հրատարակված է Անանիա Շիրակացու և Հովհաննես Կոզեռնի մատենագրական վաստակը (նաև վերջինիս «Մեկնութիւն տոմարի» բնագիրը) Գ. Տեր-Վարդանյանի և Հ. Քյոսեյանի աշխատասիրությամբ[23]: Հովհաննես Կոզեռնի մեկնությունը հրատարակել է Հ. Քյուրտյանը ևս՝ ձեռքի տակ եղած ԺԷ դարի մի ձեռագրի հիման վրա: 20-րդ դարավերջին գրված հոդվածում հեղինակը անդրադառնում է Հովհաննես Կոզեռնին և նրա մասին հիշատակություններին[24]:

Սույն ատենախոսության կայացման առումով անգնահատելի տեղեկություններ են պարունակում անվանի տոմարագետներ Լ. Սեմյոնովի[25], Հ. Բադալյանի[26], Բ. Թումանյանի[27], Ռ. Վարդանյանի [28], Գ. Բրուտյանի[29] մեծարժեք աշխատություններն ու

---

[21] **Ջ. Էյնաթյան,** «Պատճէն տոմարի հայոց մեծացը» և նրա մի քանի մեկնությունները, «Լրաբեր», 1976, Ե, էջ 77-88: **Ջ. Էյնաթյան,** Հովհաննես Կոզեռն տոմարագետը (ԺԱ դար), «Մատենադարան» Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի հիմնադրման հիսնամյակին նվիրված գիտաժողովի թեզիսներ, Երևան, 2009, էջ 17-20:

[22] «Պատճէն տումարի» (Է-ԺԵ. դդ.), Քննութիւն եւ բնագրեր, աշխ.՝ Ջ. Էյնաթեանի, աշխ. եւ խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երևան, 2002:

[23] «Մատենագիրք Հայոց», Է. դար, հ. Դ., Անթիլիաս-Լիբանան, 2005: «Մատենագիրք Հայոց», ԺԱ դ., հ. ԺԶ., Երևան, 2012:

[24] **Յ. Քիւրտեան**, Յովհաննէս վարդապետ Կոզեռն, «Հանդէս ամսօրեայ», 1967, թիւ 1-3, էջ 1-15:

[25] **Լ. Սեմյոնով**, Հայկական տոմարի մի քանի հարցերի մասին, Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու, Երևան, 1941, էջ 19-30: **Լ. Սեմյոնով,** Սարկավագադիր տոմարը, «Էջմիածին», 1951, Ա-Գ, էջ 46-49:

[26] **Հ. Բադալյան,** Որացույցի պատմությունը, Յերևան, 1940: **Հ. Բադալյան,** Օրացույցի պատմություն, Երևան, 1970: **Հ. Բադալյան,** Հայոց տոմարի պատմություն, Երևան, 1976:

[27] **Բ. Թումանյան**, Հայ աստղագիտության պատմություն (Հնագույն ժամանակներից մինչև XIX դարի սկիզբը), Երևան, 1964: **Բ. Թումանյան**, Առձեռն տոմարացույց, Երևան, 1965: **Բ. Թումանյան,** Հայ աստղագիտության պատմություն (XIX դ. սկզբից մինչև 1920 թ.), Երևան, 1968: **Բ. Թումանյան,** Տոմարի պատմություն, Երևան, 1972: **Բ. Թումանյան,** Օրվա մասերի բաժանումը հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1990:

[28] **Ռ. Վարդանյան,** Հայաստանի չափերն ու կշիռները (V-XV դդ.), Երևան, 1989: **Ռ. Վարդանյան,** Հայոց տոմարական եղանակը. թարգմանական բնագրերի ժամանակը, Երևան, 1993: **Ռ. Վարդանյան,** Հայոց տոնացույցը (4-18-րդ դարեր), Երևան, 1999: **Ռ. Վարդանյան,** «Պատճէն տոմարի Հայոց»-ի խմբագրությունների ժամանակի որոշումը (6-18-րդ դդ.), Երևան, 2007: **Ռ. Վարդանյան,** Անանիայի Շիրակացւոյ (Շիրակունւոյ) համարողի ՇԼԲ կարգը, Երևան, 2015: **Ռ. Վարդանյան, Գ. Կարախանյան,** Անանիա Շիրակացին և նրա «Քննիկոնը», Աճեմյան մատենաշար, հ. Ա, Երևան, 2002, էջ 37-117: **Ռ. Վարդանյան, Գ. Սիմոնյան,** Հրեական Զատկի և քրիստոնեական տասնիննամյակների վերականգման փորձ, Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, Ա, Երևան, 2006, էջ 9-57: **Ռ. Վարդանյան, Լ. Սարգսյան, Գ. Սիմոնյան,** «Ժամանակական կանոնի»՝ Արարչության թվականության համակարգերի և Ա. Շիրակացու

հոդվածները: Վերջինները մեծապես նպաստել են հայոց տոմարի պատմությունը, նրա օրինաչափությունները, տոմարական եզրույթներն ու երևույթները բացատրելուն, ինչպես նաև «Պատճէն տոմարի հայոց»-ի խմբագրություններին և առհասարակ տոմարական զանազան հարցերին անդրադառնալուն: Գ. Սիմոնյանի ատենախոսությունն ու հոդվածաշարը նշանակալի խթան հանդիսացան ատենախոսության հատկապես Գ գլխի շարադրման համար[30]: Անանիա Շիրակացու, Հովհաննես Կոզեռնի, Հովհաննես Սարկավագի մատենագրական վաստակին անդրադառնալուն օժանդակեցին Հ. Քյոսեյանի, Մ. Աբեղյանի, Փ. Անթապյանի, Ա. Առաքելյանի աշխատությունները[31], իսկ Հովհաննես Կոզեռնի մեկնության ուսումնասիրության տեսանկյունից արժեքավոր տեղեկություններ հաղորդեց Հ.

հաշվման սկզբունքների փոխառնչությունները, Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, Զ, Երևան, 2011, էջ 21-48: **Ռ. Վարդանյան, Լ. Սարգսյան,** «Անանիայի Շիրակացւոյ (Շիրակունւոյ) համարողի ՇԼԲ կարգ»-ը, Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, Ը, Երևան, 2013, էջ 25-47: **Ռ. Վարդանյան, Լ. Սարգսյան,** Քրիստոնեական տոները՝ ըստ Անանիա Շիրակացու «Յայտնութեան» և «Զատկի» ճառերի, Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, Թ, Երևան, 2014, էջ 7-33:

[29] **Գ. Բրուտեան,** Օրացոյց հայոց, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1997: **Գ. Բրուտեան,** Յովհաննէս Սարկավագի ժամանակագրական համակարգը, Երևան, 1999: **Գ. Բրուտեան,** Հայկական տոմարագիտութիւն, Երևան, 2016: **Գ. Բրուտեան,** Հայկական օրացոյցը իր սկզբնավորումից մինչեւ մեր օրերը, Երեւան, 2018: **Գ. Բրուտյան,** Հայոց տոմարի որոշ հարցերի մասին. Հայոց օրացոյցը մինչեւ մեծ թուականը, «Էջմիածին», 1984, Ե, էջ 54-58: **Գ. Բրուտյան,** Հայոց տոմարի որոշ հարցերի մասին. Հայոց բուն թուական, «Էջմիածին», 1985, Ա, էջ 51-57, Բ-Գ, էջ 72-80: **Գ. Բրուտեան,** Հայոց տոմարի որոշ հարցերի մասին. Գրիգոր Մագիստրոսի տոմարական հանելուկն ու Արտաշիսեան վէպի հատուածը, «Էջմիածին», 1992, Դ-Ե, էջ 95-118: **Գ. Բրուտեան,** Հայոց տոմարի որոշ հարցերի մասին. Հայոց փոքր թուական (Սարկաւագադիր տոմար), «Էջմիածին», 1994, Դ-Ե, էջ 100-116: **Գ. Բրուտեան,** Հայոց տոմարի որոշ հարցերի մասին. Հայոց օրացոյցի բարեկարգումն ու կաթողիկոսների գահացուցակը, «Էջմիածին», 1994, Ը, էջ 30-48: **Գ. Բրուտեան,** Հայոց տոմարի որոշ հարցերի մասին. նախահայկեան օրացոյցի կառուցուածքը, «Էջմիածին», 1996, ԺԲ, էջ 135-164: **Գ. Բրուտեան,** Անանիա Շիրակացու տոմարի կառուցուածքը, «Բազմավէպ», 2013/3-4, էջ 11-27:

[30] **Գ. Սիմոնյան,** Հովհաննես Սարկավագը և իր «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ»-ն, Ատենախոսություն, Երևան, 2013 (անտիպ): **Գ. Սիմոնյան,** Հովհաննես Սարկավագի ՇԼԲ (532)-ամյա Զատկացուցակները, Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, Զ, Երևան, 2011, էջ 45-89: **Գ. Սիմոնյան,** Հովհաննես Սարկավագի անշարժ տոմարի ուսումնասիրությունների պատմությունից, Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, Է, Երևան, 2012, էջ 217-235: **Գ. Սիմոնյան, Ռ. Վարդանյան,** Հովհաննես Սարկավագի տոմարական ժառանգության մեջ առկա թվականության համակարգերը, Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, Ը, Երևան, 2013, էջ 48-65: **Գ. Սիմոնյան,** Քրիստոսի Հայտնության տոնը և Նրա Ծննդյան թվականը, Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, ԺԱ, Երևան, 2016, էջ 7-15: **Գ. Սիմոնյան,** Անկաստեղ (Տոմարական մի եզրույթի հետքերով), Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, ԺԲ, Երևան, 2017, էջ 36-65: **Գ. Սիմոնյան,** Ելաստղ (Տոմարական մի եզրույթի հետքերով), Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2019, Բ, էջ 7-56:

[31] **Հ. Քյոսեյան,** Ներածություն հայ եկեղեցական մատենագրության, Երևան, 2018: **Մ. Աբեղյան,** Հայոց հին գրականության պատմություն, հ. Ա, Երևան, 1944: **Մ. Աբեղյան,** Հայոց հին գրականության պատմություն, հ. Բ, Երևան, 1946: **Փ. Անթապյան,** Հովհաննես Սարկավագ Իմաստասեր, Երևան, 2001: **Ա. Առաքելյան,** Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն (I դ. մ. թ. ա. - XIV դ.), Երևան, 1959:

Քյոսեյանի հոդվածը[32]: Ներկայացված ուսումնասիրության համար կարևոր էին նաև Ա. Մաթևոսյանի հոդվածները՝ կապված Անանիա Շիրակացու «Քննիկոն» աշխատության հետ[33]: Մեկնության ժանրի, աստվածաբանության և մեկնության կապի, տոմարագիտության՝ «արտաքին» գիտություն համարվելու տեսակետի մասին շարադրելիս օգտվել ենք Հ. Անասյանի, Է. Մ. Շիրինյանի, Փ. Անթապյանի, Հ. Ոսկյանի ուսումնասիրություններից[34]: Հայոց մեծ թվականության համակարգը ներկայացնելիս արդեն իսկ թվարկված աշխատությունների և հոդվածների հետ մեկտեղ օգտագործել ենք նաև Լ. Սարգսյանի, Է. Աղայանի, Լ. Խաչիկյանի, Մ. արք. Օրմանյանի աշխատությունները, Ն. Ակինյանի և Ի. Ադամյանի հոդվածները[35]: Տոմարական եզրույթների բացատրության ժամանակ, ի թիվս վերևում նշվածների, օգտվել ենք նաև Խ. Սյուրմելյանի, Գ. Աղանյանցի և Գ. արք. Սերայդարյանի գրքերից[36]: Ատենախոսության մեջ առկա լեզվագիտական-բանասիրական հատվածները շարադրելիս օգտագործել ենք տարբեր բառարաններ[37]: Պատմական որոշ

---

[32] **Հ. Քյոսեյան,** Հովհաննես Կոզեռն Տարոնեցու աստվածաբանական ժառանգությունը, «Էջմիածին», 2007, Զ-Է, էջ 56-70:

[33] **Ա. Մաթևոսյան,** Անանիա Շիրակացու «Քննիկոնը», «Լրաբեր», 1974, թիվ 7, էջ 66-78, թիվ 8, էջ 71-81: **Ա. Մաթևոսյան,** Անանիա Շիրակացու «Քննիկոնի» երկրաչափության բաժինը, «Պատմաբանասիրական հանդես», 1979, թիվ 2, էջ 163-178: **Ա. Մաթևոսյան,** Նորից Անանիա Շիրակացու «Քննիկոնի» մասին, «Պատմաբանասիրական հանդես», 1981, թիվ 2, էջ 224-239:

[34] **Հ. Անասյան,** Հայկական մատենագիտություն (Ե-ԺԸ դդ.), հ. Ա, Երևան, 1959: **Փ. Անթապյան,** Հայ մեկնաբանական գրականության տեսական նախահիմքերի շուրջ, «Բանբեր Մատենադարանի», 15, Երևան, 1986, էջ 60-94: **Մ. Է. Շիրինյան,** Քրիստոնեական վարդապետության անտիկ և հելլենիստական տարրերը (հայկական և հունական դասական ու բյուզանդական աղբյուրների բաղդատությամբ), Երևան, 2005: **Է. Մ. Շիրինյան,** Հայոց գրերի գյուտը ըստ «Գիրք պատճառաց»-ի, «Էջմիածին», 2004, Է-Ը, էջ 86-91: **Մ. Է. Շիրինյան, Գ. Խաչատրյան,** «Գիրք պատճառաց», «Աշտանակ» հայագիտական պարբերագիրք, հ. Դ, Երևան, 2011, էջ 18-43: **Է. Մ. Շիրինյան,** Աստվածաբանությունը և մեկնությունը, Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, ԺԲ, Երևան, 2017, էջ 7-35: **Հ. Ոսկեան,** Մատենագրական քննություններ, Վիեննա, 1926:

[35] **Լ. Սարգսյան,** Հայոց տոնացույցի ծագումն ու զարգացումը (4-8-րդ դդ.), Երևան, 2010: **Է. Աղայան,** Ակնարկներ հայոց տոմարների պատմության, Երևան, 1986: **Լ. Խաչիկյան,** ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950: **Մ. Օրմանյան,** Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001: **Ն. Ակինյան,** Հայոց թուականին հաստատութեան ժամանակը, «Հանդէս ամսօրեայ», 1904, ապրիլ, էջ 97-102: **Ի. Ադամյան,** Հայկական թվականի մասին գիտելիքներ, «Բազմավէպ», 1966, թիվ 7-8, էջ 216-223:

[36] **Խ. Սիրմէլեան,** Տոմարագիտութիւն ընդհանուր եկեղեցական եւ քաղաքական, Վէնէտիկ, 1818: **Գ. Աղանեանց,** Տօմար եւ տօնացոյց Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1890: **Գ. Սերայդարյան**, Եկեղեցական տոմարագիտություն, Ս. Էջմիածին, 2003:

[37] Նոր բառգիրք հայկազեան լեզուի, երկասիրութիւն երից վարդապետաց յիշատակութենէ Մեծին Մխիթարայ Աբբահօր **Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատուրոյ Սիրմէլեան, Հ. Մկրտչի Աւգերեան,** հ. Ա, Վենետիկ, 1836, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, երկասիրութիւն երից վարդապետաց յիշատակութենէ Մեծին Մխիթարայ Աբբահօր **Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատուրոյ Սիրմէլեան, Հ. Մկրտչի Աւգերեան,** հ. Բ, Վենետիկ, 1837: **Հ. Աճառյան,** Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1926: **Հ. Աճառյան,** Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան, 1973: **Հ. Աճառյան,** Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Երևան, 1979: **Հ. Աճառյան,** Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1942: **Է. Աղայան,** Արդի հայերենի բացատրական բառարան, հ. Ա, Երևան, 1976: **Գ. Ջահուկյան,** Հայերեն ստուգաբանական

իրողություններ ճշտելուն նպաստել են հայ ժողովրդի պատմությունը ներկայացնող գրքերն ու հանրագիտարանները[38]: Ատենախոսության գլուխներում և ենթագլուխներում արտացոլված են մեր 7 հոդվածների[39] հիմնական դրույթները: Ատենախոսության կառուցման համար կարևորություն են ներկայացրել նաև օտարալեզու՝ անգլերեն[40], ֆրանսերեն[41] և ռուսերեն[42], աշխատություններն ու հոդվածները:

բառարան, Երևան, 2010: **Ս. Մալխասեանց,** Հայերէն բացատրական բառարան, հ. Դ, Երևան, 1944: **Ռ. Ղազարյան,** Գրաբարի բառարան, հ. Ա, Երևան, 2000: **Ռ. Ղազարյան,** Գրաբարի բառարան, հ. Բ, Երևան, 2000:

[38] Հայ ժողովրդի պատմություն, հ. Բ (Հայաստանը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում), Երևան, 1984: Հայ ժողովրդի պատմություն, հ. Գ (Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում (IX դ. կեսերից մինչև XIV դ. կեսերը)), Երևան, 1976: **Ս. Մելիք-Բախշյան,** Հայոց պատմության աղբյուրագիտություն, Երևան, 1989: Հայկական սովետական հանրագիտարան, հ. Ե, Երևան, 1979: Հայկական սովետական հանրագիտարան, հ. ԺԱ, Երևան, 1985: «Ամենայն հայոց կաթողիկոսներ» հանրագիտարան, Ս. Էջմիածին, 2008: «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002:

[39] **Գ. Գալստյան,** Անանիա Շիրակացին և նրա «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» բնագիրը, «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, Երևան, 2020, N 4, էջ 62-71: **Գ. Գալստյան,** Հովհաննես Կոզեռնը և նրա «Մեկնութիւն տոմարի» աշխատությունը, ՇՊՀ «Գիտական տեղեկագիր», Գյումրի, 2020, N 1, Պրակ Բ, էջ 77-94: **Գ. Գալստյան,** Սամուել Անեցին և նրա «Մեկնութիւն տոմարի» աշխատության մի քանի հարցեր, «Հոգևոր Շիրակ. Պատմական ուղի և արդիականություն», Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2020, էջ 43-50: **Գ. Գալստյան,** Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տումարիս Հայազնեայ» երկը, «Բանբեր Մատենադարանի», 33, Երևան, 2022, էջ 425-445: **Գ. Գալստյան,** Հովհաննես Կոզեռնի «Մեկնութիւն տոմարի» բնագիրը («Զի՞նչ է թուական»-ի խնդիրը), «Հայագիտական հանդես», Երևան, 2022, N 5 (59), էջ 198-212: **Գ. Գալստյան,** «Տոմար» հասկացության մեկնաբանությունները՝ ըստ «Մեկնութիւն տոմարի» բնագրերի», ՀՊՄՀ «Գիտական տեղեկագիր», Երևան, 2023, N 1 (44), էջ 146-158: **G. Galstyan,** Characteristics and General Features of Armenian Calendar Interpretations in the 7th-11th Centuries, «Հայագիտական հանդես», Երևան, 2023, N 3 (62), էջ 121-136:

[40] **Alden A. Mosshammer**, The Easter Computus and the Origins of the Christian Era, OUP Oxford, 2008. **A. Drost-Abgaryan,** Anania Širakac'i as Hymnographer, In: Sciences and Learning in Armenia between Anania Širakac'i and Grigor Magistros, Orientalia Christiana Periodica, Roma, Nr.1, Vol. 86 (2020), pp. 137-147. **G. Broutian,** Anania Širakuni's K'nnikon and its Destiny, In: Sciences and Learning in Armenia between Anania Širakac'i and Grigor Magistros, Orientalia Christiana Periodica, Roma, Nr.1, Vol. 86 (2020), pp. 123-135. **E. M. Shirinian,** The Study of Sciences at the Time of Anania Širakac'i. In: Sciences and Learning in Armenia between Anania Širakac'i and Grigor Magistros, Orientalia Christiana Periodica, Roma, Nr.1, Vol. 86 (2020), pg. 91-105. **M. E. Shirinian,** The *Liber Causarum*: A Mediaeval Armenian Isagogical Collection, *Le Muséon*, 130 (1-2), 2017, pp. 139-176. **A. J. Hacikyan, et al.,** The Heritage of Armenian Literature: From the sixth to the eighteenth century, Vol. II, Wayne State University Press, 2000. **N. Garibian,** Anania Širakac'i and the Historical Realities of the 7th Century, In: Sciences and Learning in Armenia between Anania Širakac'i and Grigor Magistros, Orientalia Christiana Periodica, Roma, Nr.1, Vol. 86 (2020), pp. 65-90. **R. P. Agrawal, S. K. Sen,** Creators of Mathematical and Computational Sciences, Switzerland, 2014.

[41] **A. Orengo,** Astronomie, astrologie et calendriers, Les arts libéraux et les sciences dans l'Arménie ancienne et médievalé, sous la direction de Valentina Calzolari, Paris, 2002, pp. 237-263 (book pp. 326). **L. Ter-Petrossian,** "Le *Calendrier Pascal* d'Andreas de Byzance", Revue des Études Arméniennes, Peeters, 41 (2022), Festschrift Zekiyan, pp. 423-429.

Ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը:

Տեսական նշանակություն: Աշխատանքում ներկայացվում և քննարկվում են Է-ԺԲ դդ. մեծահամբավ տոմարագետների կյանքն ու գործը և, իհարկե, նրանց հեղինակած հայոց տոմարի մեկնությունները: Կատարված աշխատանքի կարևոր հատկանիշներից մեկն այն է, որ մեկնություններում առկա կանոնները քննվում են ոչ միայն տոմարագիտական, այլև բանասիրական, պատմական, որոշ դեպքերում՝ աստղագիտական դիտանկյուններից: Հայոց տոմարը վաղնջական ծագում ունի և մեծ նշանակություն է ունեցել ժողովրդի համար: Այսօր ևս այն շատ կենսական է, քանզի անկախ մեր կամքից՝ մենք հաճախ առնչվում ենք խնդիրների, որոնք կարելի է բացատրել միայն տոմարագիտության հենքով: Այդ բացատրություններից շատերը առկա են հայոց տոմարի մեկնություններում:

Գործնական նշանակություն: Աշխատանքը կնպաստի Անանիա Շիրակացու, Հովհաննես Կոզեռնի, Հովհաննես Սարկավագի և Սամուել Անեցու կյանքին և գործունեությանը, ինչպես նաև նրանց հեղինակած հայոց տոմարի մեկնություններին վերաբերող հարցերի պարզաբանմանը: Այդ գրվածքներում առկա տոմարական կանոններն ունեն կիրառական նշանակություն, որովհետև դրանց գործադրմամբ ինչպես միջնադարում, այնպես էլ այսօր հնարավոր է որոշել տարբեր երևույթների, տոների տարեթվերը և տոնման ժամանակները: Ատենախոսության առանձին դրույթներ ու եզրակացություններ կարող են օգտագործվել բուհական կրթական համակարգում «Տոմարագիտություն» դասընթացի շրջանակներում:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի գիտական խորհրդում: Այն քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի աստվածաբանության և հայ եկեղեցու պատմության ամբիոնի նիստում: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները արտացոլված են հեղինակի՝ ԲԿԳԿ-ի կողմից երաշխավորված պարբերականներում հրատարակված 6 հոդվածներում և «Հոգևոր Շիրակ. պատմական ուղի և արդիականություն» խորագրով միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածուում հրատարակված 1 հոդվածում:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Կառուցվածքային առումով ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից և 8

---

[42] **Н. Марр,** Сказание о католикосе Петре и ученом Иоанне, СПб, Тип. Имп. Акад. Наук. 1895. **В. В. Болотов,** Лекции по истории древнего церкви, том 4, Москва, 1994. **А. К. Гаврилов,** Языкознание византийцев, История лингвистических учений, Ленинград, 1985, с. 109-158. **Дионисий (Шленов) Игумен,** Празднование Рождества и Крещения согласно древним свидетельствам и памятникам полемической письменности середины XI века, “Богословский вестник”, Москва, 2008/2009, № 8-9, с. 222-274. **Э. Бикерман,** Хронология древнего мира, Москва, 1975. **Л. Тер-Петросян,** Армения И христианская Сирия: Культурные связи (IV–V вв.), Ереван, 2022. **П. М. Мурадян,** Хронология систем летоисчислений по армянским источникам, "Армянская эра", «Լրաբեր», 1976, համար 1, էջ 49-64: **П. В. Кузенков,** Христианские хронологические системы: История летосчисления в святоотеческой и восточнохристианской традиции, Москва, 2014. **П. В. Кузенков,** Пасхалии и летосчисления на примерах систем Анатолия Лаодикийского и Андрея Константинопольского: богословские и астрономические аспекты, Богословские труды, Научно-богословский журнал РПЦ, выпуск 43–44, Москва, 2012, с. 503-540. **П. В. Кузенков, К. А. Панченко,** «Кривые Пасхи» и Благодатный Огонь в исторической ретроспективе, Вестник Московского университета, сер. 13, Москва, 2006, № 4, с. 3–29.

ենթագլխից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից: Ընդհանուր ծավալը կազմում է 186 + III էջ:

Ներածության բաժնում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են ուսումնասիրության առարկան, նպատակն ու խնդիրները, ատենախոսության ժամանակագրական սահմանները, գիտական նորույթը, մեթոդաբանական հիմքը, տեսական և գործնական-կիրառական նշանակությունը, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը, ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:

Ատենախոսության **առաջին գլուխը** վերնագրված է **«Է դար. Անանիա Շիրակացին և իր «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» բնագիրը»** և բաղկացած է չորս ենթագլխից:

«Է դարի հայոց տոմարի մեկնությունների առանձնահատկությունները» վերնագրով առաջին ենթագլխի սկզբում կարճառոտ անդրադարձ է կատարվում մեկնության ժանրին: Քննարկվում է, որ թե՛ բանավոր և թե՛ գրավոր մեկնությունները հայտնի էին դեռևս քրիստոնեությունից դարեր առաջ, և շատ վաղուց մարդը ցանկացել է հասկանալ ու բացատրել կյանքի զանազան բնագավառներին և իրեն շրջապատող աշխարհին վերաբերող շատ ու շատ հարցեր: Եվ դրանց որոնման ճանապարհը հանգեցրել է մեկնության ժանրի ստեղծմանն ու կանխորոշել նրա հետագա զարգացման ընթացքը: Թարգմանական գրականությանը համընթաց մեծ զարգացում է ապրել նաև հայ ինքնուրույն գրականությունը, որի շրջանակներում դարերի ընթացքում ստեղծվել են բազմաբնույթ և բազմաժանր կոթողային նշանակություն ունեցող ստեղծագործություններ, որոնց թվում էին նաև հայոց տոմարի մեկնությունները: Սույն ենթագլխում խոսվում է նաև «նուրբ գրեանք» և «արտաքին գրեանք» կոչվող երկերի մասին: Ներկայացվում է, որ շատ գիտությունների՝ այդ թվում քերականության, փիլիսոփայության, աշխարհագրության, երկրաչափության հետ մեկտեղ «արտաքին» գիտությունների շարքն են դասվել աստղագիտությունը, նաև տոմարագիտությունը: Սակայն, եկանք այն եզրահանգմանը, որ տոմարագիտությունը, լինելով համընդհանուր գիտակարգ, ներառում է տարրեր գիտության զանազան բնագավառներից, որոնք վերջինիս առնչում են ինչպես բնագիտական, այնպես էլ հումանիտար և հայագիտական տարատեսակ գիտաճյուղերի, իհարկե, նաև Աստվածաշնչին ու եկեղեցական մատենագրությանը: Այստեղ նաև դասակարգված ներկայացվում են, թե որոնք են տոմարի մեկնություններ գրելու պատճառները, նաև թե այդ մեկնությունները մատենագրական ժառանգության մեջ (ձեռագիր և տպագիր) ինչ բնույթի աշխատություններում են ընդգրկվել:

«Անանիա Շիրակացի. տոմարական ժառանգությունը» վերնագրով **երկրորդ ենթագլխում** կարճառոտ անդրադարձ է կատարվում Անանիա Շիրակացու կյանքին (մասնավորապես ուսումնառության ընթացքին) և տոմարական ժառանգությանը: Ներկայացվում է, որ Անանիա Շիրակացու աշխատությունները կարևոր սկզբնաղբյուրներ են եղել գիտության տարբեր ոլորտներով զբաղվող միջնադարյան գիտնականների համար: Շիրակացու մատենագրությունը բազմաժանր է. նրա անունով մեզ են հասել թվաբանությանը, մաթեմատիկային, չափագիտությանը, աստղագիտությանը, երկրաբանությանը, տոմարագիտությանը, տիեզերագիտությանը, աշխարհագրությանը, օդերևութաբանությանը, պատմագիտությանը վերաբերող երկեր, ինչպես նաև շարականներ ու այլ բնույթի գործեր:

Այստեղ կարևորվել է այն իրողությունը, որ Անանիա Շիրակացու տոմարական ժառանգությունը հարուստ է արժեքավոր բնագրերով: Հեղինակի՝ տոմարական երկերի շարքում էական դեր ունեն նաև տոմարի մեկնողական ճառերը՝ «Անանիա Շիրակայնւոյ համարողի ասացեալ ի Յայտնութիւն Տեառն եւ Փրկչին մերոյ» և «Անանիա Շիրակայնւոյ համարողի ասացեալ ի Զատկին Տեառն»: Վերջիններս իրենց բնույթով, իհարկե, տարբերվում են մեկնողական այլ բնագրերից: Ճառերում հիմնականում քննարկվում և մեկնվում է որևէ մասնավոր խնդիր՝ ի տարբերություն «Մեկնութիւն տոմարի» բնագրերի, որտեղ հեղինակներն անդրադառնում են տոմարի թե՛ տեսական, թե՛ գործնական-կիրառական բազմատեսակ հարցերի:

«Հայոց տոմարի մեկնություններին վերաբերող նախակրթությունները «Գիրք պատճառաց»-ում» վերնագրով **երրորդ ենթագլխում** առաջին անգամ հրատարակվում և մեկնաբանվում են «Գիրք պատճառաց» շատ ուշագրավ և դեռևս անտիպ ժողովածուի (ՄՄ, ձեռ. 1879) նախակրթություններում պահպանված՝ տոմարի մեկնություններին վերաբերող տարբեր մեջբերումներ**:** Հարկ եղած դեպքում դրանք զուգորդվում են Անանիա Շիրակացու՝ տոմարի մեկնողական ճառերում ներկայացված տեղեկություններին: Մեջբերումների մի մասը վերաբերում է Զատկի տոնը կիրակի օրը կատարելու խնդրին, ինչպես սահմանվել էր Նիկեայի Ա տիեզերական ժողովում (325 թ.): Մեկնողական հատվածները հուշում են նաև, որ Նիկեայի տիեզերաժողովից առաջ ևս տեղական ժողովներ են գումարվել և սահմանել Սուրբ Զատկի տոնման ճշգրիտ շաբաթագիրը: Բայց քանի որ դրանք եղել են տեղական ժողովներ, և դեռևս եղել են քրիստոնյա ժողովուրդներ, որոնք չեն կատարել խնդրելին, կարիք է զգացվել տիեզերական ժողովում այդ հարցը վերջնականապես լուծելու: Եվ ըստ այդմ՝ կարող ենք ասել, որ Զատկի օրը կիրակի տոնելու իրողությունը մինչև Նիկեայի ժողով կարգավորվել է աստիճանաբար: Ժողովածուի նախակրթություններում մեջբերված որոշ հատվածներ էլ վերաբերում են Եղիսաբեթի հղացմանը և Գաբրիել հրեշտակապետի Ավետմանը Մարիամին: Նաև նշվում են այս իրադարձությունների շաբաթագրերը՝ Եղիսաբեթի հղացումը՝ շաբաթ, Ավետումը՝ չորեքշաբթի: Առնչվում ենք նաև Հիսուս Քրիստոսի Ծննդյան և Հայտնության (Մկրտության) տոները միասին հունվարի 6-ին տոնելու վերաբերյալ մեջբերման: Եղիսաբեթի հղացման և Ավետման շաբաթագրերի նույն արժեքներին հանդիպում ենք նաև Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» երկի նույնանուն գլխում:

Պողոս Տարոնացու «Թուղթ ընդդէմ Թէոփիստեայ» աշխատության մեջ ևս վերոնշյալի առթիվ հետաքրքրական տեղեկությունների ենք ականատես լինում: Պողոս Տարոնացին բավականաչափ էջեր է հատկացնում՝ բացատրելու Քրիստոսի Ծննդյան իրողությունը՝ բնականաբար զուգորդված Զաքարիայի պապանձման, Եղիսաբեթի հղացման և Գաբրիելի՝ Մարիամին Ավետման իրադարձություններով: Նա կրկին հաստատում է Եղիսաբեթի հղացման՝ շաբաթ և Ավետման՝ չորեքշաբթի օրերը: Քրիստոսի Ծննդյան օրը՝ կիրակի, իսկ Մկրտության օրը՝ չորեքշաբթի, վկայված ենք գտնում Անանիա Շիրակացու մոտ: Հետաքրքրական է, որ Ավետման ամսաթվի՝ ապրիլի 6 կամ ապրիլի 7 հիշատակությունները կապված են հետևյալ իրողության հետ. Անանիա Շիրակացու ժամանակաշրջանում Եղիսաբեթի հղությունը դրվել է հոկտեմբերի 9-ին, իսկ ավելի ուշ շրջանում՝ ԺԲ դարից հետո, հոկտեմբերի 10-ին: Ուստի, Հովհաննես Սարկավագի և Պողոս Տարոնացու աշխատություններում հանդիպում ենք Ավետման՝ ապրիլի 7 = նիսան 17 ամսաթվին:

«Գիրք պատճառաց»-ի նախակրթություններում պահպանվել են Զատկի տոնի նախընթաց Քառասնորդաց պահքի ճաշու ընթերցանության նյութերին, օրապահքերին և այլ իրողություններին վերաբերող որոշ մեջբերումներ ևս:

«Անանիա Շիրակացու «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» բնագիրը» վերնագրով **չորրորդ ենթագլխում** նախ ներկայացվում է բնագրի հեղինակության հարցը: Համաձայնել ենք Ռ. Վարդանյանի տեսակետին, որ բնագրի հեղինակը Անանիա Շիրակացին է, քանի որ այստեղ վերլուծված են Շ-եակ համակարգն ու դրա բաղադրատարրերը, որոնք ստեղծվել են 562 թ., երբ 552 թ. արդեն ավարտվել էր Անդրեասի 200-ամյա Զատկացուցակը: Անանիա Շիրակացին է հեղինակել երկը, որովհետև այն քննում է նաև հայոց շարժական տոմարի և թվականության հարցերը՝ կապված հայոց Շ-եակի հետ: Այսինքն՝ Անանիա Շիրակացին մեկնել է իր ստեղծած տոմարը: Այս իրողությունը ճիշտ հասկանալու համար առաջարկել ենք բնագրի վերնագիրն ընկալել այսպես. «Մեկնութիւն տոմարի Անանիայի, զոր արարեալ է Անանիա Շիրակացւոյ (Շիրակոյնւոյ) համարողէ»: Սույն ենթագլխում անդրադարձ է կատարվում նաև Անդրեաս Բյուզանդացուն և նրա կազմած 200-ամյա Զատկացուցակին:

«Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» բնագիրը հրատարակել է Ջ. Էյնաթյանը: Եվ առաջին խնդիրները, որոնց անդրադառնում է Անանիա Շիրակացին, Հայոց մեծ թվականի սահմանման և դրան առնչվող այլևայլ հարցերն են, որոնց վերաբերյալ տեղեկություններ ենք քաղում ոչ միայն այս, այլև գրեթե բոլոր «Մեկնութիւն տոմարի» բնագրերից: Անանիա Շիրակացին տոմարի ընդարձակ մեկնության մեջ (այն հրատարակել է Ա. Աբրահամյանը) սահմանում է թվականը և դրա դրսևորումները՝ օլիմպիադը, ինդիկտիոնը, հոբելյանը, նոնոսն ու իդոսը: Վերջիններս ներկայացրել ենք այստեղ՝ ցույց տալով դրանց առաջացման պատճառները, աստվածաշնչյան վկայությունները, նաև անդրադարձել ենք դրանց կիրառման եղանակներին՝ հարկ եղած դեպքում կատարելով համապատասխան հաշվարկներ:

Այս ենթագլխում մանրամասնորեն քննարկված է «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» բնագրի «Զի՞նչ է տոմար» մեկնողական հատվածը: Մեկնողական միավորից հասկանալի է դառնում, որ «տոմար» եզրույթի իմաստներից մեկը «ժողով»-ն է: Անանիա Շիրակացին, ժողով ասելով, մեկնության սկզբնահատվածում նկատի է առնում աստղերի միատեղ հավաքվելը, ժողովվելը: Մեկնության շարունակական մասն արձանագրում է, որ տոմարը նաև երկու լուսատուների՝ Արևի և Լուսնի ընթացքն է: Եզրույթի իմաստներից մեկն էլ Արևի և Լուսնի միատեղ լինելն է, այսինքն՝ խավարումը: Առհասարակ Արեգակի և Լուսնի խավարումները կրոնի մեջ մեծ դեր և նշանակություն են ունեցել: Հակոբ Ղրիմեցու մեկնության մեջ արծարծված է այն միտքը, որ Հիսուս Քրիստոսի խաչելության ժամանակ երկու լուսատուներն էլ զրկվել են իրենց լույսից, այսինքն՝ խավարել են: Այս անչափ հետաքրքրական և գիտականորեն թերևս անբացատրելի երևույթը ներկայացրել ենք որպես հինկտակարանյան մարգարեության կատարում:

Ենթագլխում այնուհետև քննվում են, թե ինչ են կրկնակը, կիսակը, վերադիրը, յոթներյակը, նահանջը, տասնիններյակը, ամիսը, նաև թե որոնք են Լուսնի ծննդյան և լրման օրերը գտնելու կանոնները: Վերջինները աշխատանքի մյուս գլուխներում և ենթագլուխներում համեմատվում են խնդրո առարկա այլ մեկնությունների

համապատասխան սահմանումների հետ, որտեղ ընդգծվում և մեկնաբանվում են կանոնների փոփոխության կամ նույնական մնալու պատճառները:

Ատենախոսության երկրորդ գլուխը, որը վերնագրված է **«Ժ-ԺԱ դարեր. Հովհաննես Կոզեռնը և իր «Մեկնութիւն տոմարի» բնագիրը»,** բաղկացած է **երկու ենթագլխից:**

«Հովհաննես Կոզեռն Տարոնեցի տոմարագետը» վերնագրով առաջին ենթագլխում փորձել ենք բացահայտել Հովհաննես Կոզեռնի անձը՝ որպես տոմարագետ, նաև հզոր աստվածաբան՝ քննարկելով նրա վերաբերյալ առկա մատենագրական տեղեկությունները՝ զուգորդելով դրանք ժամանակի պատմական իրադարձություններին: Հետևելով Հ. Քյուրտյանին՝ արձանագրել ենք, որ Հովհաննես Կոզեռնի մասին հիշատակություններ են պահպանվել Արիստակես Լաստիվերցու «Պատմութիւն», Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրութիւն» աշխատություններում, Սմբատ Սպարապետի «Տարեգիրք» ժողովածուում: Նրա վերաբերյալ տեղեկություն քաղել ենք նաև Սամուել Անեցու «Ժամանակագրութիւն» երկից: Կոզեռնի մասին հիշատակությունները վերաբերում են տարբեր իրողությունների՝ Բյուզանդիայի Բարսեղ (Վասիլ) կայսեր պահանջով «Ծռազատկի մեկնություն» գրելուն, ներկա 1021/1022 թթ. Պետրոս Գետադարձ (1019-1058 թթ.) կաթողիկոսի հետ Տրապիզոնում ջրօրհնեքի արարողություն կատարելուն, հայոց 478 (ներկա 1029/1030 թթ.) և հայոց 485 թ. (ներկա 1036/37 թթ.) տեղի ունեցած Արևի խավարմանը:

Սույն ենթագլխում կարևորություն է տրվել Շ-եակ առաջին շրջապտույտի ընթացքում տեղի ունեցած Ծռազատիկներին, դրանց առիթով ստեղծված տոմարական երկերին, որոնք դիտվել են տվյալ ժամանակաշրջանի պատմական իրողությունների համատեքստում: Այստեղ խմբակարգված ներկայացրել ենք Հովհաննես Կոզեռնի անվամբ մեզ հասած և Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակներում պահպանված մոտ 70 ձեռագրերը, որոնք պարունակում են նրա «Մեկնութիւն տոմարի» բնագիրը, «Զպատճառ վերայ բերելեաց կամ ի բաց տանելեաց թուականին»-ը, «Տեսիլ» երկը, այլ մեկնություններ, խրատ, ճառեր, քարոզներ, «Յոհաննու Տարօնացւոյ, ըստ արժանեաց կոչեցեալ վարդապետի աշակերտի երանելոյ վարդապետին... շարադրութիւն պատմութեան տանն Բագրատունեաց ի վերա Հայաստանեաց, զոր արարի հրամանաւ տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի...» աշխատության առաջաբանը: Այս ամենը փաստում է, որ Կոզեռնը իրավամբ եղել է ժամանակի լավագույն տոմարագետը, նաև ամենալավ աստվածաբաններից և մեկնիչներից մեկը:

Երկրորդ ենթագլուխը կրում է **«Հովհաննես Կոզեռնի «Մեկնութիւն տոմարի» բնագիրը»** վերնագիրը: Սույն ենթագլխի սկզբում խոսվում է այն մասին, որ վերոնշյալ երկը հրատարակել են Հ. Քյուրտյանը, Ջ. Էյնաթյանը և Հ. Քյոսեյանը: Այնուհետև ներկայացրել ենք, որ Հովհաննես Կոզեռնի մեկնությունը սկսվում է հայոց 1 թվականի հաստատման մասին տեղեկատվությամբ, որտեղ նա այն առնչում է ներկա 552/553 թվականին՝ նավասարդի 1-ը զուգադրելով տարբեր համաժամանակյա տարեթվերի: Այլ մեկնություններում հայոց թվականության ելակետը կապվում է նաև 562 թ.-ին՝ Շ-եակի՝ հաշվման իմաստով 10-րդ տարուն, որն ակնհայտ է դառնում համապատասխան հաշվումները կատարելիս: Հաշվի առնելով առկա տեսակետները՝ ցույց ենք տվել հաշվարկային զուգորդությունները հայոց թվականության համակարգի երկու սկզբների՝ 552/553 և 562 թթ.-ի համար: «Զի՞նչ է թուականը» տոմարական միավորում բերված համաժամանակյա թվականներն ուսումնասիրելուն նպաստել են Հովհաննես

Կոզեռնի «Մեկնութիւն տոմարի»-ն բովանդակող ՄՄ 5809 և ՄՄ 8716 ձեռագրերը, որոնք օգտակար եղան՝ առաջ բերելու մեզ հետաքրքրող բնագրային առանձնահատկություններն ու նմանությունները՝ ի համեմատ հրատարակված բնագրերի:

Ներկայացրել ենք նաև Կոզեռնի մեկնության ընդհանուր բնութագիրը, այնուհետև արձանագրել, որ Հովհաննես Կոզեռնը խմբագրել է «Պատճէն»-ը՝ փոփոխություններ կատարելով «Գարնանամուտ»-ի և «Աւետիք այլազգեաց»-ի կանոնների հաստատուն թվերում: Այստեղ այնուհետև մեկնաբանված են, թե ինչ յուրահատկություններ ունի խնդրո առարկա բնագիրը՝ ի համեմատ Անանիա Շիրակացու «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» բնագրի: Անդրադարձ ենք կատարել նաև կրկնակի, վերադրի, յոթներյակի՝ Կոզեռնի կարգած կանոններին, Անկաստեղին, Ելաստեղին, ցույց ենք տվել տոմարագետի խմբագրած «Պատճէն»-ը, ինչպես նաև կազմել և ներկայացրել ենք 1004/1007 թթ.-ի «Պատճէն»-ը:

«ԺԱ դարավերջից - ԺԲ դարերում ստեղծված «Մեկնութիւն տոմարի» բնագրերի ընդհանուր բնութագիրը» վերնագրով երրորդ գլուխը բաղկացած է **երկու ենթագլխից:**

«Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տոմարի» երկը» վերնագրով **առաջին ենթագլխում** անդրադարձ է կատարվում Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուի մի քանի գլուխների և դրանց բովանդակած կանոններին: Ընտրվել են ժողովածուի այն մասերը, որոնց պարունակած կանոնները համեմատության եզրեր ունեն քննարկված մյուս բնագրերի նույնաբնույթ սահմանումների հետ: Ժողովածուի այդ գլուխներն են՝ *«Յովհաննու արարեալ մեկնութիւն, որ մականուն Սարկավագ կոչի»,* որը Ա. Աբրահամյանի հրատարակության մեջ կրում է տոմարական ժողովածուի նույնանուն վերնագիրը, այն է՝ *«Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ», «Յաղագս ըստ հռոմոց ամսոց, եւ ԴԺ.երորդ լուսնոյ զատկաց, եւ փոփոխմանց իրաց, եւ անուանց եւ յարակայից», «Յոհաննու քահանայի յաղագս եղանակաց եւ տաւնից եւ քանիաւնութեան ամաց դիպաբանութեամբ ի նոյն տեսութիւն», «Յաղագս յարակայի, վերադրաց եւ րոպէից», «Պատճէն տոմարի»:*

Ատենախոսության այս ենթագլխում քննարկվել են Հովհաննես Սարկավագի կատարած մեկնությունները՝ կապված հայոց ամիսների անշարժության և հայոց տոների շարժականության հետ, եբրայական տոների, հայոց տոմարի՝ եբրայականից առավել հին լինելու, հայոց շարժական և մնացյալ ազգերի անշարժ տոմարների տարբերության բացատրությունների հետ. այստեղ Սարկավագը հայոց տոմարի պարբերականությունը կապում է ոչ թե սովորական նահանջների, այլ գերադրական նահանջի, այն է՝ 1460-ամյա պարբերաշրջանի հետ: Խոսվում է նաև բոլոր ազգերի տոմարների յոթներյակների հիմքում եբրայեցվոց յոթներյակների համակարգն ընդունելու մասին, նաև բացատրվում են Հովհաննես Սարկավագի կատարած փոփոխությունները և դրանց պատճառները վերադրի, հարակաների համակարգերի վերաբերյալ: Իսկ Շ-եակի 19-ամյակի Զատկական լրման առաջին տարին ապրիլի երկուսի՞ն, թե՞ ապրիլի չորսին սահմանելու հարցը ներկայացրել ենք՝ «Յաղագս լուսնի» վերաբերյալ կանոնների համեմատական քննությամբ: Այստեղ ընդգծել ենք նաև Հովհաննես Սարկավագի մեկնության դերն առհասարակ հայագիտության և մասնավորապես տոմարագիտության բնագավառներում՝ գտնելու համար հարցերի

պատասխաններ, որոնք հատկապես աղերսվում են պատմությանը, աստղագիտությանը, աստվածաբանությանն ու դավանանքին:

Երկրորդ ենթագլուխը վերնագրված է **«Ստեփանոս Մեծրկա որդու և Սամուել Անեցու «Մեկնութիւն տոմարի» բնագրերը»:** Այստեղ անդրադարձ ենք կատարել Ստեփանոս Մեծրկա որդու և Սամուել Անեցու «Մեկնութիւն տոմարի» բնագրերին: Ըստ Ռ. Վարդանյանի ուսումնասիրությունների՝ 1126 թ. Ստեփանոս Մեծրկա որդին գրել է «Մեկնութիւն տոմարի» բնագիրը, որտեղ զետեղված են եղել «Սկիզբն տումարի հայոցը», ապա իր անշարժ տոմարի նախագիծը, այլ «Պատճէն»-ներ, նաև Արևի շրջապտույտը համաստեղություններով, 19-ամյակը (ըստ այդմ էլ այնտեղ ներառված պետք է լիներ Շ-եակը 2-րդ շրջապտույտի համար), իր յոթերյակների համակարգը և այլն, որոնք հայտնի են ՄՄ 1999, ՄՄ 3082, ՄՄ 1973 գրչագրերից: Ստեփանոս Մեծրկա որդու անշարժ տոմարի նախագիծը տարեսկիզբն ընդունում է նավասարդի 1 = մարտի 1՝ հետադարձ հաշվարկով գտնելով հայոց շարժական տոմարի նավասարդի 1 = մարտի 1 համարժեքը, այն է՝ ՇԻԹ-ՇԼԲ (1080-1083 թթ.) քառամյակը: Հաշվի առնելով այս իրողությունը՝ այստեղ ներկայացրել ենք տարվա ընթացքում տեղի ունեցող տոների, արևային տարվա եղանակների ու աստղագիտական երևույթների ամսաթվային համարժեքները՝ ըստ հուլյան և Ստեփանոս Մեծրկա որդու կազմած անշարժ տոմարի նախագծի:

Նրա 19-ամյակը, որի առաջին տարվա համարժեքը հոռի 5 = ապրիլի 4-ն է (Շ-եակ 2-րդ շրջապտույտի 10-րդ տարին), ցույց է տալիս, որ նա իր նախագծով ստեղծել է Շ-եակ Զատկացուցակ՝ սկսելով Հայոց փոքր թվականի 1-ին տարուց՝ հաշվման իմաստով (1085 թ.), բայց 19-ամյակի առաջին տարին ընդունել է հոռի 5 (= ապրիլի 4) լրման տարին կամ Հայոց փոքր թվականի 10-րդ տարին: Հիմք ընդունելով այն տեղեկությունները, որոնք վերաբերում են Ստեփանոս Մեծրկա որդու Լուսնի լրման 19-ամյակին, յոթերյակների, նաև վերադիրների համակարգին, փորձ ենք կատարել՝ վերականգնելու վերջինիս ստեղծած Զատկացուցակի երկու 19-ամյակների աղյուսակային պատկերը: Ստեփանոս Մեծրկա որդու ստեղծած ՇԼԲ (532)-ամյա Զատկացուցակը բաղկացած է 28 հատ Լուսնի լրման 19-ամյա պարբերաշրջանից: Մեր վերականգնած Զատկացուցակի կանոնները վերաբերում են նահանջին, թվականին (ներկայացրել ենք Շ-եակ առաջին շրջապտույտի տարիները, Շ-եակ երկրորդ շրջապտույտի Հայոց մեծ թվականը, նաև ներկա թվականը), վերադրին, յոթերյակին, Լուսնի լրման 19-ամյակին և Զատկի օրվան: Բերված կանոնները զուգորդվում են մանրամասն մեկնաբանություններով, որոնք ի ցույց են դնում Զատկացուցակի կազմության համար մեր ընդունած արժեքների ընտրությունը:

Հաջորդիվ անդրադարձել ենք Սամուել Անեցու կյանքին ու գործին, և, իհարկե, «Մեկնութիւն տոմարի» բնագրի բովանդակային առանձնահատկություններին: Բնագիրը հրատարակել է Ա. Աբրահամյանը. առաջին հատվածը, որն ունի «Մեկնութիւն տոմարի, զոր արարեալ է Սամուէլի քահանայի ի խնդրոյ Ստեփանոսի Իմաստասիրի» խորագիրը, պարունակում է 31 կանոն: Բնագրի հաջորդ՝ «Վասն պատճէնի հռոմայեցւոցն և |վասն| կրկնակաց եւ կիսակաց» վերնագրով մասում կա 53 կանոն: Նշված երկրորդ հատվածի 53 կանոնից տոմարին վերաբերում են միայն 21-ը, իսկ մնացյալ 32 սահմանումներն ունեն տիեզերագիտական բնույթ: Շեշտել ենք այն հանգամանքը, որ «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» բնագրի 25 կանոններն ամբողջությամբ առկա են Սամուել Անեցու «Մեկնութիւն տոմարի» երկում: Այդ իսկ

պատճառով այս ենթագլխում խոսել ենք միայն այն հարցերի մասին, որոնք յուրահատկություն են Անեցու մեկնողական բնագրի տոմարական հատվածում: Դրանք վերաբերում են «Զի՞նչ է յարակայն», «Զի՞նչ է միջնայարակայն», «Զի՞նչ է փոքր յարակայն» կանոններին, որոնք արծարծված ենք գտել միայն Հովհաննես Սարկավագի «Պատճէն տոմարի»-ում: Այս կանոնները ներկայացրել ենք մանրամասն քննությամբ: Կարճառոտ անդրադարձ ենք կատարել նաև «Զի՞նչ է տոմար», «Զի՞նչ է նահանջ», «Զի՞նչ է նահանջից նահանջ» սահմանումներին, ինչպես նաև ցույց ենք տվել բնագրի ընդհանուր բնութագիրը: Ներկայացրել ենք նաև մեկնության «Վասն պատճէնի հռոմայեցւոցն եւ |վասն| կրկնակաց եւ կիսակաց» հատվածում պարսկերեն և արաբերեն մի քանի եզրույթների կիրառումը և դրանց հայերեն համարժեքները: Սույն ենթագլխում վերստին ընդգծել ենք, որ Սամուել Անեցու մեկնությունն ունի մեծ կարևորություն՝ տոմարական գիտելիքներն արժևորելու, պահպանելու և սերունդներին փոխանցելու տեսանկյունից:

«Եզրակացություններ» բաժնում ամփոփվել են ատենախոսության հիմնական արդյունքները և եզրահանգումները.

1. Մատենագրության մեջ տոմարագիտությունը դասվել է արտաքին գիտությունների շարքը՝ ընկալվելով Աստվածաշունչ մատյանից, կրոնական ու եկեղեցական գիտության և մատենագրության շրջանակներից դուրս: Բայցևայնպես, տոմարագիտությունը, լինելով ընդհանրական գիտակարգ, ներառում է տարրեր զանազան գիտություններից ու գիտաճյուղերից (աստվածաբանություն, աստվածաշնչագիտություն, տոնագիտություն, պատմություն, գրականություն, թվաբանություն, աստղագիտություն, տիեզերագիտություն, մշակույթի այլևայլ ոլորտներ), որոնք այն սերտորեն առնչում են ինչպես Աստվածաշնչին ու եկեղեցական մատենագրությանը, այնպես էլ հումանիտար և հայագիտական, նաև բնագիտական տարատեսակ գիտաճյուղերի:
2. Ատենախոսության մեջ դասակարգված են հայոց տոմարի մեկնությունները գրելու պատճառները. դրանք են ա) պարզաբանել տոմարին վերաբերող խրթին հարցերը, բ) հայոց տոմարի շարժականությունը ևս դժվարություններ է առաջացրել՝ տոմարական բարդ հարցերին պատասխան տալու համար, գ) հայոց տոմարը հարաբերակցել այլ ազգերի գործածելիք տոմարների հետ դ) խմբագրել և ընդօրինակել «Պատճէն տոմարի հայոց» աշխատությունները, ե) դրանց շնորհիվ ամբարված գիտելիքները սերունդներին փոխանցել, զ) ոչ միայն մեկնաբանել, այլ նաև ուսուցանել տոմարական բազմաբնույթ հարցերը, է) ուսուցանել ոչ միայն տոմարագիտություն, այլև պատկերացում տալ նրան առնչակից բազմազան գիտակարգերի մասին:
3. Ուսումնասիրությունները ցույց տվեցին, թե հայոց տոմարի մեկնությունները մատենագրական ժառանգության մեջ (ձեռագիր և տպագիր) ինչ բնույթի աշխատություններում են ընդգրկվել: Այսպես, դրանք առկա են ա) «Մեկնութիւն տոմարի» վերնագիրը կրող բնագրերում, բ) տոմարի մեկնողական ճառերում, գ) տոմարական տարբեր պատառիկներում, դ) տիեզերագիտական բնագրերում ե) տոմարական այլ աշխատություններում, որոնք պարունակում են նաև մեկնության տարրեր:
4. «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» երկը զետեղված է եղել Անանիա Շիրակացու կազմած «Քննիկոն» ժողովածուի մեջ: Սա տոմարի առաջին մեկնությունն էր, և այն դարձել է հիմք հետագա դարերի տոմարագետների աշխատությունների

համար: Միանշանակորեն ընդունում ենք Ռ. Վարդանյանի տեսակետը, որ բնագրի հեղինակը Անանիա Շիրակացին է, և հենց նա է մեկնել իր ստեղծած տոմարը: Այս իրողությունը ճիշտ հասկանալու համար առաջարկում ենք բնագրի վերնագիրն ընկալել այսպես. «Մեկնութիւն տոմարի Անանիայի, զոր արարեալ է Անանիա Շիրակացւոյ (Շիրակոյնւոյ) համարողէ»:

5. «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» բնագրում մեկնված են նահանջի, Լուսնի լրման օրվա որոշման հարցերը, ինչպես նաև Հայտնության ամիս-ամսաթիվը, որոնք արծարծված ենք գտնում նաև Անդրեասի կարգած 17 կանոններում:

6. «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» բնագրի 25 կանոններն ամբողջությամբ առկա են Անանիա Շիրակացու ընդարձակ մեկնության՝ «Տիեզերագիտութիւն եւ տոմար» և Սամուել Անեցու «Մեկնութիւն տոմարի» երկերում, դրանցից 10-ը՝ Հովհաննես Կոզեռնի «Մեկնութիւն տոմարի» բնագրի առաջին մասում, 2-ը՝ «Վասն հոռոմին» հատվածում, 3-ը՝ «Զպատճառ վերայ բերելեաց» բնագրում, 21-ը՝ Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» աշխատության համապատասխան գլուխներում: Այս եզրակացության համար հիմք է ծառայել ատենախոսությանը կից ներկայացված հայոց տոմարի մեկնությունների համեմատական աղյուսակը:

7. «Գիրք պատճառաց» պայմանական խորագիրը կրող ուշագրավ և դեռևս անտիպ ժողովածուի (ՄՄ, ձեռ. 1879) նախակրթություններում պահպանվել են տոմարի մեկնություններին վերաբերող տարբեր մեջբերումներ, որոնք առնչվում են Զատկի տոնը կիրակի օրը կատարելուն, ինչպես նաև Հիսուս Քրիստոսի Ծննդյան և Հայտնության (Մկրտության) տոները միասին հունվարի 6-ին տոնելու խնդրին: Աշխատանքում դրանք համեմատված են Անանիա Շիրակացու Զատկի և Հայտնության ճառերի համապատասխան հատվածների հետ: Մեջբերումների մի մասն էլ վերաբերում է Զատկի տոնի Քառասնորդաց պահքի Ավետարանական ընթերցումներին, օրապահքերին և այլ իրողությունների: Դրանց մեծ մասն առաջին անգամ հրատարակվում է սույն ատենախոսության մեջ:

8. «Զի՞նչ է տոմար» մեկնողական հատվածի առկայությունը «Մեկնութիւն տոմարի» բնագրերի շարքում վկայում է այն մասին, որ մեկնությունների հեղինակները նախ ցանկացել են բացատրել, թե առհասարակ ինչ է նշանակում «տոմար» հասկացությունը, ապա տվել են տոմարի տեսական և գործնական այլևայլ հարցերի մեկնաբանությունը: «Զի՞նչ է տոմար» մեկնողական միավորի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Անանիա Շիրակացին տոմարը սահմանում է նախ որպես ժողով՝ նկատի ունենալով աստղերի միատեղ լինելը, ինչպես նաև Արևի ու Լուսնի ընթացքը, վերջիններիս միատեղ լինելը, այսինքն՝ խավարումը:

9. Քրիստոսի խաչելության ժամանակ տեղի ունեցած Արեգակի և Լուսնի խավարման մասին կարդում ենք Հակոբ Ղրիմեցու մեկնության մեջ: Մեզ չհաջողվեց ժամանակակից գիտության մեջ գտնել որևէ փաստ, որը կհիմնավորեր, որ Երկիր մոլորակի վրա Արեգակի խավարման ժամանակ կարող է տեղի ունենալ նաև Լուսնի խավարում: Եղելությունն իրապես հրաշք է, նաև այստեղ ականատես ենք լինում հինկտակարանյան մարգարեության կատարման:

10. Հակոբ Ղրիմեցին իր մեկնության մեջ անհամեմատ մատչելի կերպով տալիս է «տոմար» եզրույթի բացատրությունները՝ բառի առավել շատ իմաստներ նշելով: Առանձնակի կարևոր է այն փաստը, որ Հակոբ Ղրիմեցին միջնորդավորված կամ ուղղակի կերպով օգտվել է նաև Արիստոտելի «Ստորոգություններ» երկից:

Հետաքրքրական է, որ «տոմար»-ն առնչակցվում է նաև «հավատ»-ի հետ, որից վերստին կարելի է եզրակացնել, որ տոմարագետները նախ և առաջ եղել են բանիմաց աստվածաբաններ:

11. Անանիա Շիրակացուց հետո հայ իրականության մեջ հաջորդ անվանի տոմարագետը Ժ-ԺԱ դդ. նշանավոր վարդապետ Հովհաննես Կոզեռնն էր, որ գրեց հայոց տոմարի մեկնություն: Վերջինս իր մեկնության նյութը մեծապես քաղել է Անանիա Շիրակացուց: Սակայն, Անանիա Շիրակացու «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» բնագրի համեմատ՝ Կոզեռնի մեկնությունն ունի ինչպես նմանություններ, այնպես էլ առանձնահատկություններ: Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակների պահպանած՝ Հովհաննես Կոզեռնի անվամբ մեզ հասած մոտ 70 ձեռագրերն օգնում են՝ Կոզեռնին ներկայացնելու ոչ միայն որպես տոմարագետի, այլև որպես իր ժամանակի լավագույն աստվածաբաններից և մեկնիչներից մեկի:

12. 570, 665, 760 և 1007 թվականները, որոնք Ծռազատկի տարիներ էին, շրջադարձային եղան հայ տոմարագիտության պատմության մեջ: Ինչպես տարբեր պատմական աղանդների տարածումը պատճառներից մեկը հանդիսացավ, որ ձևավորվի և ավարտուն տեսք ստանա հայ եկեղեցու դավանանքը, այնպես էլ Ծռազատիկը և հայոց տոմարում առաջացած խնդիրները եղան այն պատճառները, որ Անանիա Շիրակացին 665 թ.-ին գրի իր՝ տոմարի մեկնողական ճառերը (և ոչ միայն, ամբողջության մեջ նաև Շ-եակ կարգը՝ իր ընտրած 19-ամյակով)՝ ցույց տալով հայ եկեղեցու դիրքորոշումը քրիստոնեական մեծագույն տոների կատարման ճշգրիտ ժամկետների շուրջ, իսկ Հովհաննես Կոզեռնը 1007 թ.-ին ստեղծի իր «Մեկնութիւն տոմարի» մեծարժեք աշխատությունը, որի մասն է կազմել «Ծռազատկի բացատրություն»-ը:

13. 570 և 760 թթ. ևս կարևոր ժամանակահատվածներ էին հայ տոմարագիտության պատմության մեջ. 570 թ. Հովհաննես Բ Գաբեղենացի կաթողիկոսն ընդունեց քաղկեդոնականություն՝ Սուրբ Սոֆիայի տաճարում հաղորդվելով Կ. Պոլսի պատրիարքի հետ: 581 թ.՝ հընթացս Մովսես Բ Եղիվարդեցու (574-604) գահակալության, Էսայան Զատկացուցակը ներդրվեց հայոց մեջ, իսկ այդ նույն ժամանակ Աթանաս Տարոնացին սկզբնավորեց «Պատճէն տոմարի հայոց»-ը: Անանիա Շիրակացուց հետո «Պատճէն տոմարի հայոց»-ի խմբագիրը Ղևոնդ պատմիչն է, ով խմբագրությունը կատարել է Ը դարի 80-ական թթ.-ին, որն էլ մոտավորապես համընկնում է 760 թ. տեղի ունեցած Ծռազատկի ժամանակահատվածին: Թերևս կարելի է գրանցել, որ այս շրջանում հայ տոմարագիտական միտքը շատ մեծ նվաճումներ չի ունեցել, քանի որ Ը դարն առհասարակ բավականին բարդ շրջան էր հայ ժողովրդի համար՝ կապված արաբական արշավանքների հետ:

14. Հովհաննես Կոզեռնի «Մեկնութիւն տոմարի» աշխատությունը բովանդակող երկու ձեռագիր (ՄՄ 5809 և ՄՄ 8716) ուսումնասիրողների կողմից չեն օգտագործվել քննական բնագրերը կազմելիս: Այսու, նշյալ ձեռագրերը մեր ուշադրության և ուսումնասիրության կենտրոնում եղան՝ առաջ բերելու մեզ հետաքրքրող բնագրային յուրահատկություններն ու նմանությունները՝ ի համեմատ արդեն հրատարակվածների, մասնավորապես «Զի՞նչ է թուական»-ին վերաբերող հարցերի ներկայացման ժամանակ:

15. Անդրադառնալով այս ձեռագրերի պարունակած մեկնություններին՝ արձանագրենք, որ բնագրային տեքստերը, ի համեմատ հրատարակվածների, ունեն ինչպես նմանություններ (հիմնականում), այնպես էլ տարբերություններ և առանձնահատկություններ: Տարբերությունները շատ դեպքերում բանասիրական բնույթի են, առավել սակավ դեպքերում դրանք բովանդակային բնույթ ունեն. դրանց ուսումնասիրությունը կարող է ճշգրտություն հաղորդել բնագրային նյութի՝ առավել ճիշտ ըմբռնման և մեկնաբանման գործին:

16. Հովհաննես Կոզեռնի մեկնության մեջ հայոց թվականության համակարգի սկիզբը կապված է ներկա 552/553 թ.-ին: Բնագրում այն զուգադրված է համաժամանակյա տարբեր թվականների: Առհասարակ հայոց թվականության ելակետն առնչվում է նաև 562 թ.-ին, որը երևում է այլ մեկնություններում առկա տարեթվերի քննությունը կատարելիս: Հաշվի առնելով առկա տեսակետները՝ ներկայացրել ենք հաշվարկային զուգորդությունները հայոց թվականության համակարգի երկու սկզբների՝ 552/553 և 562 թթ.-ի համար:

17. Հովհաննես Կոզեռնի մեկնողական բնագրում պահպանված *«Եւ ի նոյն ամի Զատկին լրումն՝ ի Մարերի յէ (7) եւ աւրն կիւրակէ,* ***եւ ապրիլի ԺԳ (13), որ է սկիզբն բոլորին ապրելեացն»*** միավորը առաջարկում ենք վերաձևակերպել այսպես. ***«Եւ ի նոյն ամի Զատկին լրումն՝ ի Մարերի յէ (7) եւ աւրն կիւրակէ, եւ Մարերի ԺԴ (14) Զատիկն էր, եւ ապրիլի ԺԳ (13), որ է սկիզբն բոլորին ապրելեացն»,*** քանի որ ՄՄ 5809 և 8716 ձեռագրերը պահպանել են հայոց 1 թվականին Մարերի ԺԴ (14)-ին Զատիկը տոնելու իրողությունը:

18. Հիմք ընդունելով Հովհաննես Կոզեռնի մեկնության տվյալները, ինչպես նաև Ռ. Վարդանյանի հաղորդած տեղեկությունները՝ կազմել և ներկայացրել ենք 1004/1007 թթ.-ի «Պատճէն»-ը, որն օգնում է՝ պատկերացում կազմելու այդ թթ.-երի անշարժ տոների, տարվա եղանակների և աստղագիտական երևույթների հայոց ամսաթվային ճշգրիտ ժամկետների մասին:

19. ԺԱ դարավերջում - ԺԲ դարերում «Մեկնութիւն տոմարի» աշխատություն են հեղինակել Հովհաննես Սարկավագ Իմաստասերը, Ստեփանոս Մեծրկա որդին, Սամուել Անեցին, որոնք միանշանակ շատ արժեքավոր սկզբնաղբյուրներ են տոմարական դժվարընկալելի հարցերը հասկանալու և պարզաբանելու համար: Մեկնությունները կարևոր են նաև այն դիտանկյունից, որ դրանք, նախորդ շրջանի տոմարագետների հեղինակած մեկնությունների հետ համեմատ, ունեն նաև որոշ առանձնահատկություններ, որոնք հեղինակներն իրականացրել են՝ խմբագրելով և մեկնելով հայոց տոմարն առհասարակ ու «Պատճէն տոմարի հայոց» բնագրերը:

20. Հովհաննես Սարկավագի՝ Լուսնի 19-ամյա պարբերաշրջանի զատկական լրման առաջին տարին ապրիլի 4-ին սահմանելու փաստը ներկայացրել ենք «Յաղագս լուսնի» վերաբերյալ կանոնների համեմատական քննությամբ:

21. Ատենախոսությունում մեկնաբանված են Հովհաննես Սարկավագի հաղորդած տեղեկությունները հայոց տոմարի ամենահինը լինելու, բոլոր ազգերի տոմարների յոթներյակների հիմքում եբրայեցվոց յոթներյակների համակարգն ընդունելու հարցերը, ինչպես նաև բացատրված են Հովհաննես Սարկավագի կատարած փոփոխությունները և դրանց պատճառները վերադրի, հարակաների համակարգերի վերաբերյալ:

22. Հիմք ընդունելով Ստեփանոս Մեծրկա որդու անշարժ տոմարի նախագծի ելակետը, այն է՝ 1080 թ. նավասարդ 1 = մարտի 1, ներկայացրել ենք տարվա ընթացքում տեղի ունեցող տոների, արևային տարվա եղանակների ու աստղագիտական երևույթների ամսաթվային համարժեքները՝ ըստ հուլյան և Ստեփանոս Մեծրկա որդու կազմած անշարժ տոմարի նախագծի:

23. Հիմնվելով ՄՄ 1973 ձեռագրում պահպանված հիշատակությունների, նաև Ռ. Վարդանյանի ուսումնասիրությունների վրա՝ վերականգնել ենք Ստեփանոս Մեծրկա որդու կազմած Զատկացուցակի երկու 19-ամյակի պատկերը՝ ըստ հուլյան և հայոց (Ստեփանոս Մեծրկա որդու) անշարժ տոմարների:

24. Կատարված համեմատական քննությունը ցույց տվեց, որ Սամուել Անեցու «Մեկնութիւն տոմարի» բնագիրն ունի առանձնահատկություն, որը վերաբերում է հարակաների կանոններին, և այս հարցի քննարկումը չենք գտել անվանի տոմարագետների կողմից հեղինակված «Մեկնութիւն տոմարի» աշխատություններում: Այն արծարծված է միայն Հովհաննես Սարկավագի «Պատճէն տոմարի»-ում:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Անանիա Շիրակացին և նրա «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» բնագիրը, «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, Երևան, 2020, N 4, էջ 62-71:
2. Սամուել Անեցին և նրա «Մեկնութիւն տոմարի» աշխատության մի քանի հարցեր, «Հոգևոր Շիրակ. Պատմական ուղի և արդիականություն», Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2020, էջ 43-50:
3. Հովհաննես Կոզեռնը և նրա «Մեկնութիւն տոմարի» աշխատությունը, ՇՊՀ «Գիտական տեղեկագիր», Գյումրի, 2020, N 1, Պրակ Բ, էջ 77-94:
4. Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» երկը, «Բանբեր Մատենադարանի», 33, Երևան, 2022, էջ 425-445:
5. Հովհաննես Կոզեռնի «Մեկնութիւն տոմարի» բնագիրը («Ձի՞նչ է թուական»-ի խնդիրը), «Հայագիտական հանդես», Երևան, 2022, N 5 (59), էջ 198-212:
6. «Տոմար» հասկացության մեկնաբանությունները՝ ըստ «Մեկնութիւն տոմարի» բնագրերի, ՀՊՄՀ «Գիտական տեղեկագիր», Երևան, 2023, N 1 (44), էջ 146-158:
7. Characteristics and General Features of Armenian Calendar Interpretations in the 7th-11th Centuries, «Հայագիտական հանդես», Երևան, 2023, N 3 (62), էջ 121-136:

ГАЛСТЯН ГОР АШОТОВИЧ

ТОЛКОВАНИЯ АРМЯНСКОГО КАЛЕНДАРЯ VII-XII ВЕКОВ (ИСТОРИКО-ИСТОЧНИКОВЕДЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)

Резюме

Настоящая диссертация посвящена толкованиям армянского календаря, написанным в VII-XII веках и содержащимся в них каноническим определениям. Целью диссертации является подвергнуть вышеуказанные интерпретации сравнительно-аналитическому исследованию. Структурно диссертация состоит из введения, трех глав и 8 подглав, выводов, списка использованных первоисточников и литературы, а также приложения.

Во введении обосновывается актуальность темы, представлены предмет, цель и задачи исследования, хронологические рамки, научная новизна, методологическая основа, теоретическое и практико-прикладное значение, анализ использованных первоисточников и литературы, структура и содержание диссертации.

Первая глава диссертации **"VII век: Анания Ширакаци и его труд *Толкование календаря Андреаса*",** состоит из четырёх подглав. Здесь обсуждается, что такое жанр толкования в целом и каковы особенности толкования армянского календаря; говорится и о том, что теория календаря, будучи универсальной дисциплиной, включает элементы из различных областей науки. Они тесно связаны как с Библией и церковной литературой, так и с другими гуманитарными и арменоведческими, а также естественными науками. Здесь же классифицировано представлены причины написания комментариев к календарю, а также то, в какого рода произведения литературного наследия (рукописного и печатного) вошли эти комментарии.

В этой же главе кратко рассказывается о жизни Анании Ширакаци (в частности, о процессе обучения) и календарном наследии. Впервые публикуются и интерпретируются различные пассажи, относящиеся к толкованиям календаря, сохранившиеся в пролегомене интереснейшему, до сих пор неопубликованному сборнику «Книга причин» (ММ 1879). Подробно рассматриваются также толковательные речи Анании Ширакаци на летоисчисление и сравнительный анализ канонических определений оригинала "Толкование к календарю Андреаса".

Вторая глава диссертации, **"X-XI веки: Ованес Козерн и его труд *Толкование календаря*"**, состоит из двух подглав. Здесь представлен Ованес Козерн как специалист по календарю, летописец и влиятельный теолог; обсуждены и существующие сведения о нем, сопоставленные с историческими событиями того времени. В классифицированном виде приведены и около 70-ти рукописей, сохранившиеся в рукописных каталогах Матенадарана имени Маштоца под именем Ованеса Козерна. В этой же главе дан сравнительный анализ канонических определений "Толкования календаря" Ованеса Козерна, в котором комментируются

особенности рассматриваемого труда в сравнении с “Толкованием к календарю Андреаса” Анании Ширакаци. В работе уделено внимание и *Главам календаря* [«Պատճէն տոմարի»], отредактированным летописцем, а также составлены и представлены “Главы календаря” 1004/1007 года.

Глава третья “Общая характеристика оригиналов “Толкования календаря”, созданных в XI-XII веках”, состоит из двух подразделов. Здесь говорится о нескольких главах календарного сборника “Толкование армянского календаря” Ованеса Саркавага и содержащихся в них правилах. Были выбраны те главы сборника и правила, которые имеют преимущества по сравнению с определениями в других обсуждаемых оригиналах. Представляя сравнительный анализ канонических определений толкования, мы также подчеркнули роль толкования Ованеса Саркавага для арменоведения в целом и истории изучения теории календаря в частности, чтобы найти ответы на вопросы, касающиеся истории, астрономии, теологии и религии.

Обратившись к Стефаносу, сыну Мецрки и его “Толкованию календаря”, взяв за основу сообщенную им информацию, *о 19-летнем цикле полнолуния,* системе *вруцелето* [յոթներյակ], а также *эпакте* [վերադիր], мы попытались восстановить изображение созданных им двух 19-летних пасхальных списков в таблицах. 532-летний Пасхальный список, составленный Стефаносом, сыном Мецрки, состоит из 28 частей с 19-летним периодом Полнолуния. Правила восстановленного нами списка Пасхальных праздников относятся к *високосному* [նահանջ], *году* (указаны годы первого круга 532-летнего периода, великая армянская дата второго круга 532-летнего периода, а также к нынешнему году), *эпакту, вруцелету, 19-летию Полнолуния и дню Пасхи.* Приведенные правила сопровождаются подробными комментариями, которые иллюстрируют выбор значений, представленных для составления списка.

В этой же главе говорится о создании Степаносом проекта стационарного календаря, согласно которому *1 Авелаца* совпадал с 23 февраля и заканчивался 28 февраля в невисокосные годы с римской цифрой, а в високосные годы - 29 февраля. Здесь же представлены эквиваленты дат праздников, происходящих в течение года, сезонов солнечного года и астрономических явлений, согласно Юлианскому календарю и проекту стационарного календаря, составленному Степаносом, сыном Мецрка.

В конце главы мы коснулись жизни и творчества Самуэля Анеци и, конечно же, особенностей оригинала “Толкования календаря”, касающихся видов *Постоянного* [հարակա]. Здесь же мы коснулись использования нескольких персидских и арабских терминов и их армянских эквивалентов. В конце, еще раз подчеркнуто, что толкования Самуила Анеци имеет большое значение с точки зрения ценности, сохранения и передачи календарных знаний из поколения в поколение.

В разделе **“Выводы”** обобщены основные результаты и заключения диссертации.

GALSTYAN GOR ASHOT

INTERPRETATIONS OF THE ARMENIAN CALENDAR OF THE VII-XII CENTURIES (A HISTORICAL AND SOURCE STUDY)

Abstract

The present dissertation is devoted to the interpretations of the Armenian calendar written in the seventh through twelfth centuries and the canonical definitions contained therein. The aim of the dissertation is to subject the above interpretations to a comparative-analytical study. Structurally, the thesis consists of an introduction, three chapters and 8 subchapters, conclusions, a list of used primary sources and literature, and an appendix.

The **"Introduction"** section substantiates the relevance of the topic, presents the subject, the aim and objectives of the study, chronological framework, scientific novelty, methodological basis, theoretical and practical-applied significance, analysis of used primary sources and literature, structure and content of the thesis.

The first chapter of the dissertation, **"The Seventh Century: Anania Shirakatsi and His Work *Interpretation of the Calendar of Andreas*",** consists of four subchapters. It discusses what the genre of interpretation in general is and what the peculiarities of the interpretation of the Armenian calendar are; it also says that the theory of calendar, being a universal discipline, includes elements from various fields of science. They are closely connected with the Bible and church literature and other humanities and Armenology, as well as natural sciences. The reasons for writing commentaries on the calendar, as well as the kinds of works of literary heritage (manuscript and printed) in which these commentaries were included, are also categorized here.

Additionally, it provides a brief overview of Anania Shirakatsi's life, particularly his learning process, and his investment in the field of calendar studies. For the first time, this text presents and analyzes various quotations related to the interpretations of the calendar, which are preserved in the prolegomena of the unpublished manuscript called "The Book of Causes" (MM 1879). The chapter also provides a detailed examination of Anania Shirakatsi's homilies on the interpretation of the calendar, as well as a comparative analysis of the canonical definitions of the original "Interpretation of the Calendar of Andreas".

The second chapter of the dissertation, **"10th-11th Centuries: Hovhannes Kozern and His Work *Interpretation of the Calendar*",** consists of two subchapters. It presents Hovhannes Kozern as a calendar expert, chronicler, and influential theologian; existing information about him, juxtaposed with historical events of the time, is also discussed. About 70 manuscripts preserved in the manuscript catalogs of the Mashtots Matenadaran under the name of Hovhannes Kozern are also given in a classified form. In the same chapter a comparative analysis of the canonical definitions of "Interpretation of the Calendar" by Hovhannes Kozern is given, which comments on the peculiarities of the considered work in comparison with "Interpretation of the Calendar of Andreas" by Anania Shirakatsi. The work

also pays attention to the "Calendar Chapters" [«Պատճէն տոմարի»], edited by the chronicler, as well as the "Calendar Chapters" of 1004/1007 were compiled and presented.

Chapter three, "General Characteristics of the Texts Called "Interpretation of the Calendar" Created in the XI-XII Centuries", consists of two subsections. Here, several chapters of the calendar collection "Interpretation of the Armenian Calendar" by Hovhannes Sarkavag and the rules contained in them are discussed. Those chapters of the collection and the rules that have advantages over the definitions in the other originals under discussion have been selected. Presenting a comparative analysis of the canonical definitions of interpretation, we also emphasized the role of Hovhannes Sarkavag's interpretation for Armenian studies in general and the history of the study of calendar theory in particular, in order to find answers to questions concerning history, astronomy, theology and religion.

Referring to Stepanos, the Son of Metzrka and his "Interpretation of the Calendar", taking as a basis the information reported by him, about the *19-year cycle of the full moon, the vruzeleto system* [յոթներյակ], as well as *epact* [վերադիր], we tried to reconstruct the image of the two 19-year Easter lists created by him in tables. The 532-year Easter schedule compiled by Stepanos, the Son of Metzrka consists of 28 parts with a 19-year period of Full Moon. The rules of the list of Easter holidays reconstructed by us refer to the *leap* [նահանջ], *the year* (the years of the first circle of the *Great Paschal cycle* [Շ-եակ] are given, also the great Armenian date of the second circle of the Great Paschal cycle, and the Dionysian year), *the epact, the vruzeleto system,* the *19-year Full Moon cycle and the Easter day.* These rules given are accompanied by detailed commentaries that illustrate the choice of meanings presented to make the list. In the same chapter it is told about creation by Stepanos of the project of the stationary calendar. According to this project, the *Aveleats 1st* coincided with February 23 and ended on February 28 in non-leap years, and on February 29 in leap years, following the Roman calendar. Here are also presented equivalents of dates of holidays occurring during year, seasons of solar year and astronomical phenomena according to the Julian calendar and the project of the stationary calendar made by Stepanos, the Son of Metzrka.

At the end of the chapter we touched upon the life and work of Samuel Anetsi and, of course, the peculiarities of his "Interpretation of the Calendar" concerning the types of *the Permanent* [հարակա]. Here we also alluded the use of several Persian and Arabic terms and their Armenian equivalents. At the end, it is once again emphasized that Samuel Anetsi's interpretations are of great importance in terms of value, preservation and transmission of calendar knowledge from generation to generation.

The **"Conclusions"** section summarizes the main results and conclusions of the dissertation.